Հայաստանի մարզերում պարբերաբար կենդանիների դաբաղ եւ այլ հիվանդություններ են բռնկվում: Գյուղացիներն ամեն տարի չեն կարողանում բերքը ժամանակին իրացնել: Ստիպված են լինում էժան վաճառել, որպեսզի այն չփչանա: Ա՛յս հիմնախնդիրներով պետք է զբաղվի նախարար Պապոյանը, ոչ թե 4 գառ ծնած «մայրիկ ոչխարի» գովազդով:

Կարդացեք՝ էջ 4

Ես պնդում եմ, որ մեր քաղաքական պատանդների վերադարձի ամենամեծ խոչընդոտը ՀՀ օրվա վարչակազմն է: Ինչո՞ւ: Որովհետեւ մենք լսել ենք վարչապետին ոչ հարիր հարցադրում, մասնավորապես՝ Ռուբեն Վարդանյանի մասին, թե մենք դեռ պետք է իմանանք՝ Ռուսաստանն ինչու է ուղարկել նրան: Կներեք, դրանք «դանոսչիկի» խոսքեր են:

Կարդացեք՝ էջ 6



Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանն անամոթաբար ստել է Ղազախստանից ցորենի նոր խմբաքանակներ ներմուծելու մասին: Նոր ներմուծումներ չեն եղել, 2025-ի նոյեմբերին ներմուծված IV կարգի եւ տոքսիններով վարակված խմբաքանակի թեման հասել է ՀՀ դատախազություն եւ ՆԳՆ Քրեական ոստիկանություն:

Կարդացեք՝ վաղվա համարում

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 40 (4175), 17 մարտ, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, նախկին դիվանագետ Հրաչյա Թաշչյանը, որ պատրաստակամություն է հայտնել Նիկոլ Փաշինյանի «գիծն» առաջ տանել, պարզվում է՝ Փաշինյանի աշխատակազմում օգնական աշխատելու ընթացքում մասնակցել է ադրբեջանական կողմի հետ գաղտնի բանակցություններին՝ 2018-2019 թթ.: Հիշեցնենք, որ 2020 թվականի հուլիսի 9-ին էր, որ նա նշանակվեց վարչապետի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ՝ 3 տարի ժամկետով, իսկ 1.5 տարի անց՝ 2021 թ. դեկտեմբերին, Փաշինյանը նրան ազատեց, երբ արտահոսքեր կային այդ բանակցությունների մասին: Նա գրագրության մեջ է եղել մասնավորապես Ադրբեջանի նախագահի աշխատակազմի արտաքին քաղաքական հարցերով բաժնի ղեկավար Հիքմեթ Հաջիեւի հետ: Ասում են՝ նույն պատրաստակամությամբ ծառայել է նաեւ նախկիններին. մինչ Փաշինյանի օգնական նշանակվելը, պաշտոններ է զբաղեցրել ՀՀ ԱԳՆ-ում՝ ՆԱՏՕ-ի բաժնի վարիչ, ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության դեսպանորդ, ՀՀ կառավարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ: Թաշչյանը ՀՀ արտակարգ դեսպանորդի եւ լիազոր նախարարի դիվանագիտական աստիճան ունի:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ երեկ հանդիպել են ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի հետ՝ ճշգրտումներ անելու իրենց հետագա գործունեության եւ ճակատագրի հետ կապված: Գրել էինք, որ տնօրենի պաշտոնից Էդիտա Գզոյանի սկանդալային հեռացումից հետո աշխատակազմը չի պատկերացնում, թե ինչպես է շարունակելու հետագա աշխատանքը, արդյոք կառավարությունը չի՞ արգելելու այսուհետ գիտական գործունեությամբ զբաղվել: Նրանց լուրեր են հասել, որ Ցեղասպանության թանգարանի Արցախի բաժինը եւս փակվելու է, եւ նրանք նամակով դիմել էին ԿԳՄՄՆ-ին ու Հոգաբարձուների խորհրդին՝ հասկանալու Արցախի բաժնի ճակատագիրը: Տեղեկացանք, որ հանդիպման ժամանակ նախարարն աշխատակիցներին հանգստացրել է, թե՝ գնացեք, ձեր գիտական գործունեությամբ զբաղվեք, ոչ մեկը ձեզ չի արգելելու եւ չի խանգարելու: Արցախի բաժնի վերաբերյալ էլ հստակ պատասխաններ չեն հնչել, ասվել է միայն՝ ինչպես աշխատում էիք, այնպես էլ շարունակեք աշխատել, ձեր աշխատանքը կապ չունի պետական արարողակարգի հետ:

Զրոյական կետից

Նիկոլ Փաշինյանը որոշել է մեր պատմությունը զրոյից գրել, ինչպես ժամանակին արցախյան հարցի բանակցություններն էր զրոյական կետից սկսում: Նա որոշել է նաեւ մեր ողջ անցյալը վերատեսության ենթարկել: Առաջ նա թերահավատություն էր հայտնում սովետական տարիներին ցեղասպանության թեմայի արծարծման առումով եւ ասում էր. «Պետք է դեռ հասկանալ՝ ի՞նչ է տեղի ունեցել Հայոց ցեղասպանության ժամանակ, ինչո՞ւ եւ ո՞ւմ միջոցով ենք ընկալել Հայոց ցեղասպանությունը: Ո՞նց է, որ 1939 թվին Հայոց ցեղասպանության օրակարգ չի եղել, եւ ո՞նց է, որ 1950-ին Հայոց ցեղասպանության օրակարգ է հայտնվել»: Հիմա նմանատիպ հարցեր է բարձրացնում ղարաբաղյան շարժման կապակցությամբ. «Մենք պետք է հասկանանք՝ ղարաբաղյան շարժումն ինչ էր»: Անկախության հռչակագիրը Սահմանադրությունից հանելու հող է նախապատրաստում. «Դա Անկախության հռչակագիր չէ, կոնֆլիկտի հռչակագիր է»: Եվ մինչ նա վերանայում է մեր պատմության դրվագներն ու մեր պետության հիմքերն է խարխլում, հարեւան պետության ղեկավարը ճիշտ հակառակն է անում՝ հայտարարում է, որ մեր օդային տարածքն օգտագործելու համար մեր թույլտվությունը ստանալու կարիքը չունի՝ արդեն իսկ թռչում են: Ասում է, որ իր սիրտը փառավորվում է այն մտքից, որ միջազգային բառապաշարում ամրագրվել է «Զանգեզուրի միջանցք» տերմինը, հայտարարում է, որ ինքը «բազմաթիվ պատճառներ ունի Հայաստանի տարածքային ամբողջականությունը չճանաչելու», բայց այսօր ճանաչում է, «թեեւ չի կարող երաշխավորել, թե կես տարի անց ինչ կլինի»: Եվ, ահա, այս պայմաններում Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը խոսում են խաղաղությունից, հայտարարում են, որ այն այլեւս անշրջելի է, եւ մարզերն ընկած՝ քվե են մուրում ՀՀ քաղաքացիներից, չնայած մինչեւ ընտրությունները դեռ երկու ամսից ավելի ժամանակ կա:

Իշխանությունը, որոշ տեղեկություններով, մեծ ջանքեր է գործադրում, որ արեւմտամետներն ընտրություններին մասնակցեն մեկ միասնական բլոկով, հատկապես շահագրգիռ են Արամ Սարգսյանի եւ Գուրգեն Սիմոնյանի համագործակցությամբ, որոնց կարող են միանալ նաեւ մյուսները՝ Արման Բաբաջանյանի գլխավորությամբ: Այդ պարագայում, կարծում են, որ անցողիկ շեմը կհաղթահարեն, եւ ՔՊ-ն էլ ապահովագրված կլինի հետընտրական կոալիցիայի հարցում, սակայն մինչ այս պահը Արամ Զավենիչին համոզել չի հաջողվում: Նա վստահ է, որ միայնակ էլ կհաղթահարի անցողիկ 4 տոկոսը, եւ դեմ է միավորմանը: Դեր չեն խաղում նաեւ այն խոստումները, որ դաշինքով մասնակցության դեպքում Արեւմուտքը մեծ ֆինանսական աջակցություն կցուցաբերի: Մեր աղբյուրն ասում է, որ Զավենիչը չի ուզում դափնիները ոչ մեկի հետ կիսել: Ըստ ամենայնի, Արման Բաբաջանյանի շուրջը կհամախմբեն քաղհասարակության որոշ ներկայացուցիչների եւ կփորձեն լայն կոնսոլիդացիայի տպավորություն ստեղծել:

ԱՌՈՒՇԸ ՈՐՈՇԵԼ Է ԵՐԿՈՒ ԼԱՐԻ ՎՐԱ ԽԱՂԱԼ

Գորիս համայնքի ղեկավարի տեղակալ Իրինա Յոլյանի հրաժարականի դիմումը պայմանավորված է համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի քաղաքական դիրքորոշմամբ, ավելի կոնկրետ ասած՝ ճամբարափոխությամբ: Ժամանակին ընդդիմադիր եւ Նիկոլ Փաշինյանին «սյունյաց ողջույններով» դիմավորելու ակցիան կազմակերպած Առուշանյանը, որը կալանք կրեց, 2021 թվականին էլ «Հայաստան» դաշինքի անդամ էր, սահուն անցում է կատարել դեպի իշխանական ճամբար եւ վերջերս անգամ Ալեն Սիմոնյանի ծննդյան խնջույքին է մասնակցել: Բայց նա փորձում է երկու լարի վրա խաղալ՝ համայնքապետարանում վստահեցրել է, որ ընտրություններին ՔՊ-ի օգտին չի աշխատելու, ՔՊ-ին էլ վստահեցնում է, որ Գորիսն իրենցն է, եւ նախօրեին ինքնակամ միացել էր Փաշինյանի քարոզարշավին, երբ վերջինս Գորիսում էր: Հենց այս քայլն է, ըստ լուրերի, Յոլյանի համար որոշիչ: Նա, մեր տեղեկություններով, ընդդիմադիր մի քանի շրջանակներից առաջարկներ ունի, բայց որոշել է ընդունել Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստանի» առաջարկը եւ առաջիկայում կհայտարարի այդ մասին: Համայնքապետարանի մեր աղբյուրը պատմեց, որ երեկ կոլեկտիվում սգի տրամադրություն է եղել, ոմանք ափսոսել են Յոլյանի հեռանալու առիթով, մյուսներն էլ հասկացել են, որ կորցրել են եւ երբեմնի ընդդիմադիր համայնքապետին, եւ նրա տեղակալին:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՎՏԱՆԳՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Նոր սահմանադրության նախագծի տեքստն արդեն պատրաստ է:

Եվ նախատեսվում է այն քննարկել իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նիստում, նաեւ՝ խմբակցությունում: Այս մասին արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի առաջին նիստի ընթացքում երեկ հայտարարել է նախարար Սրբուհի Գալյանը: «Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը շատ ակտիվ աշխատում է: Մենք ամեն շաբաթ նիստեր ենք հրավիրում: Եվ տեքստն արդեն պատրաստ է, ինչպես եւ խոստացել էի: Բայց հրապարակման մասով դեռ նորություններ չունեմ, որովհետեւ որոշվել է տեքստը քննարկել նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչությունում եւ խմբակցությունում: Դրանից հետո տեքստը հրապարակելու մասով որոշում կկայացվի»,- ասաց նախարարը:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

Նոր մայր օրենք ունենալու գլխավոր ինտրիգը գործող Սահմանադրության նախաբանում առկա հղումն է Անկախության հռչակագրին, որն Ադրբեջանին դուր չի գալիս: Այն հանելու վերաբերյալ իր մտադրության մասին մոտ մեկ տարի առաջ արտահայտվել է Նիկոլ Փաշինյանը՝ տուրք տալով Ադրբեջանի նախագահի պահանջներին: Ընդ որում, մի անգամ արդեն Սահմանադրական դատարանը դրան անդրադարձել է, երբ վավերացվում էր սահմանազատման կանոնակարգը: ՍԴ-ն որոշեց, որ Հռչակագրում տարածքային պահանջներ չկան, եւ այն չի կարող հետեւանքներ առաջացնել: Բայց Ադրբեջանին դա չբավականացրեց: Նրանք շարունակեցին պնդել, որ Հայաստանը պետք է փոխի Սահմանադրությունը, եւ նոր սահմանադրության մեջ չպետք է լինի Անկախության հռչակագրի տեքստը: Օրերս Նիկոլ Փաշինյանն ավելի հստակ պնդեց իր դիրքորոշումը. «Նոր սահմանադրության մեջ Անկախության հռչակագրին հղում պետք է չլինի: Ասեմ՝ ինչու, որովհետեւ Անկախության հռչակագիրը կառուցված է կոնֆլիկտի տրամաբանության վրա: Չենք կարող մենք կոնֆլիկտի տրամաբանության վրա գնալ եւ ուզենալ անկախ պետություն կառուցել»:

Ադրբեջանի նախագահի խոսքով՝ Հայաստանի Սահմանադրությունից Անկախության հռչակագիրը հանելը խաղաղության համաձայնագրի ստորագրմանը միակ նախապայմանն է այսօր: Մեր Հռչակագիրը, ըստ Ադրբեջանի, իրենց նկատմամբ տարածքային հավակնություններ է պարունակում: Իսկ Անկախության հռչակագրում հիշատակվում է Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի միավորման մասին: «Եթե կենտրոնանանք միայն խաղաղության համաձայնագրի վրա՝ չլուծելով Սահմանադրության հետ կապված խնդիրը, դա կնշանակի, որ խաղաղության համաձայնագիրը զրո է, որովհետեւ կիսակասի երկրի մայր օրենքին, եւ այս խնդիրը մենք արդեն երկու տարուց ավելի է՝ բարձրաձայնում ենք»,- ավելի վաղ հայտարարել էր Ադրբեջանի արտգործնախարարը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության նախագահ **Էդմոն Մարուքյանը**, որ սահմանադրական բարեփոխումների խորհրդի անդամ է, սակայն տեւական ժամանակ է՝ չի մասնակցում նիստերին, հայտարարելով, որ դեմ է Ալիեւի կողմից «տնային աշխատանք» հանձնարարելուն եւ Հայաստանի կողմից այն կատարելուն, ըստ այդմ՝ Հռչակագիրը Սահմանադրության նախաբանից հանել չի կարելի, երեկ մեզ հետ զրույցում կրկին պնդեց՝ Հռչակագրից հրաժարվելը կնշանակի Հայաստանի անկախությունը վտանգի տակ դնել: «Հայաստանի Սահմանադրությունից հանել Անկախության հռչակագրի հղումը՝ կնշանակի հանել Հայաստանի ծնունդականը, կնշանակի չկա նման պետություն: Նիկոլ Փաշինյանը գործում է մեր անկախության դեմ»,- ասում է Մարուքյանը: «Երբ Փաշինյանը հայտարարում է, թե մեր Հռչակագիրը կոնֆլիկտի հռչակագիր է, նա, ըստ էության, ցուցմունք է տալիս մեր պետության դեմ՝ որ իր երկիրն է, որ կոնֆլիկտ է հրահրել: Այսինքն, Սովետական Միության փլուզումից հետո նա պնդում է, որ կոնֆլիկտ հրահրողը մենք ենք՝ սա ադրբեջանական թեզ է»: Որպեսզի մեր անկախությունը չվտանգենք, Մարուքյանի առաջարկած լուծումն այն է, որ Փաշինյանը չպետք է ընտրվի վարչապետ, որ չոչնչանա մեր պետության «ծնունդականը». «Դրանից հետո մենք Սահմանադրական դատարանի որոշումով շարունակում ենք բանակցությունները, որ տարածքային պահանջ չունենք, ու կնքում ենք խաղաղության պայմանագիր: Եթե Փաշինյանը մնում է վարչապետ, իրեն օգտագործում են էս երկիրը վերացնելու համար, փափուկ ուժով, ինչ ասում են՝ անում է»:

Նոր սահմանադրության տեքստն իշխող խմբակում քննարկելուց հետո քննարկումները պետք է տեղափոխվեն նաեւ Սահմանադրական խորհուրդ, որտեղ էլ կշարունակվեն քննարկումները, ապա քվեարկության կդրվի տեքստը, որպեսզի իբրեւ նախագիծ ներկայացվի հանրաքվեի: Մարուքյանը նշում է, որ փորձելու է խափանել այդ փոփոխությունը, ասում է, որ խորհրդում մեկ-երկու հոգի եւս դեմ են Հռչակագիրը հանելուն: Մենք տեղեկացանք, որ մեկը Արթուր Սաքունցն է:

«Բայց ո՞վ է Անկախության հռչակագիրն ուժը կորցրած ճանաչում: Կներեք, Բրիտանիայի ծննդյան վկայականը որտե՞ղ է, կամ Բրիտանիան, որ չունի անկախության հռչակագիր, դադարո՞ւմ է պետություն լինելուց, լուրջ չէ»,- Մարուքյանին հակադարձում է **Դանիել Իոաննիսյանը**: «Ինձ համար շատ ավելի կարեւոր է Սահմանադրությունում, օրինակի համար, ընդդիմությունը Քննիչ հանձնաժողով ստեղծելու իրավունք ունենա, կամ հակակոռուպցիոն մարմինները սահմանադրական երաշխիքներ ունենան, քան որեւիցե կարգավորում, որն իրավական ուժ չունի, այդ թվում՝ Հռչակագիրը»,- կարծում է Իոաննիսյանը:

Սահմանադրությունը կփոխվի, թե ոչ՝ կախված է ընտրությունների արդյունքներից: Հիշեցնենք. որպեսզի բանը հասնի հանրաքվեին, պետք է Ազգային ժողովի 2/3-ը կողմ քվեարկի Սահմանադրության նախագծին, ձայների պարզ մեծամասնությունը բավարար չէ:

ԻՆՉՈ՞Ւ ՉՊԱՐԵՆ, ԵԹԵ ԱՅԴՔԱՆ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Նիկոլ Փաշինյանը, որը 2021-ի խորհրդարանական ընտրություններից առաջ ՀՀ քաղաքացիներին խոստանում էր Արցախի դեօկուպացիա, իսկ դրանից առաջ բղավում՝ «Արցախը Հայաստան է, եւ վերջ», այժմ «Արցախի Հանրապետություն» եզրույթը համարում է վտանգավոր սպառնալիք Հայաստանի համար եւ ուղղակի պատերազմի կոչ: Նիկոլ Փաշինյանը նախորդ շաբաթ խոստովանեց, որ ինքն է Ցեղասպանության թանգարանի տնօրենին աշխատանքից հեռացրել, չնայած նա իր ուղիղ ենթական չէ: Պատճառն այն է, որ վերջինս Արցախի մասին գիրք է նվիրել ԱՄՆ փոխնախագահ Վենսին: Աժ նախկին պատգամավոր, նախկին ՔՊ անդամ **Սոֆյա Հովսեփյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով Փաշինյանի վերջին հայտարարություններին, նկատում է. «Այն բոլոր հայտարարությունները, որ անում է այդ մարդը, իր քաղաքական տրամաբանության շարունակությունն է: Մենք չպետք է շատ հեռու գնանք եւ վաղուց պետք է կանխատեսած լինեինք, որ այդպես էլ պետք է լիներ: Եթե մարդը հանձնում է Արցախը եւ այն համարում է ադրբեջանական տարածք, բնական է, որ պետք է նման տեսակետներ հնչեցնի: Դպրոցի դասագրքերից էլ հանել են Արցախի մասին բոլոր մանրամասները, ազատագրական պայքարը եւ այլն, բնական է, որ Ցեղասպանության թանգարանից էլ պետք է մաքրեն Արցախի մասին պատմությունը, ինչպես նաեւ՝ հենց ցեղասպանությանն առնչվող մանրամասները: Ադրբեջանն ասում է՝ Հայաստանն էլ է իրենցը, հետագայում մենք նաեւ կլսենք, որ Տավուշը, Սյունիքն ու Գեղարքունիքն էլ են ադրբեջանական տարածքներ, ավելին՝ մենք, որպես ազգ, այն չունենք հայկական համարելու որեւէ իրավունք: Ցավալին այն է, որ գյուղերում արդեն խոսույթ կա, որ այս գյուղը թուրքերն են հիմնել, այն գյուղը ազերիներն են հիմնել եւ այլն: Մենք որեւէ կերպ այս ամենից չենք կարող զերծ մնալ, քանի դեռ այս մարդիկ են հանդես գալիս որպես Հայաստանի իշխանություն: Քանի դեռ այս քաղաքականությունը մարդկանց գիտակցության մեջ է մխրճվել, շատ կոպիտ կերպով մարդկանց պարզապես ստիպում են հարմարվել այս սարսափելի իրականությանը: Իսկ մարդիկ էլ իրենց գրպանի, օրվա հացի ու կաշվի համար հնազանդվում են այդ ամենին: Ոչ բոլորը, բայց քիչ չեն նմանները: Բոլորիս շրջապատում էլ կան մարդիկ, ովքեր ընդունում են, որ Թուրքիայի հետ պետք է բարիդրացիական հարաբերություններ հաստատել, առեւտուր անել, անգամ Հայոց ցեղասպանությունն են կասկածի տակ դնում, ասում են՝ արդյո՞ք Արցախը հայկական էր եւ այլն: Նիկոլ Փաշինյանը հենց այդ քաղաքականությամբ է փորձում առաջ շարժվել»:

Խոսելով նախընտրական քարոզարշավի եւ ընդդիմության անելիքների մասին՝ մեր զրուցակիցը կարծում է. «Հետեւում եմ նախընտրական քարոզարշավներին եւ շատ ցավում եմ, քանի որ տպավորություն եմ ստանում, որ ընդդիմությունն էլի մի քանի մանդատի համար է պայքարում, որպեսզի նորից՝ եւս հինգ տարի նստեն ու ոչինչ չանեն, ինչպես 2021-ից մինչ այս պահը: Նրանք որեւէ կերպ չեն գալիս այն գիտակցությանը, որ պետք է համախմբվեն եւ Նիկոլ Փաշինյանին վռնդեն իշխանությունից: Այս մարդիկ չեն գիտակցում, որ երկու մանդատ փախցնելով՝ միմիայն իրենց աշխատավարձի հարցն են լուծում, ուրիշ ոչ մի բան: Փաշինյանը լկտի ձեւով այցելում է մարզեր, մարդկանց զարմացնում է ասֆալտով, բայց այդ ասֆալտի համար հենց այդ մարդիկ են վճարում՝ իրենց հարկերով ու տուրքերով: Իբր թե չպետք է այդպես լիներ, իսկ ի՞նչ պետք է լիներ: Թող անկեղծորեն ասեն՝ այդ բոլոր աշխատանքներից ո՞ր մասն է իրենց գրպանից, որ մասը՝ արտաքին պարտքից: Ի՞նչ են ուզում ասել այս հայտարարություններով՝ չես հասկանում, տպավորություն է, որ ասում են՝ լավ է գոնե 100 տոկոսով չենք թալանել, այլ թալանել ենք 99 տոկոսով միայն: Նայում եմ դրանց կերուխումին, սիրտս խառնում է, անկիրթ, անգրագետ մասսա կա, որ ուղղակի լափելով ապրում է, այ, այդ մասսային ուզում են ցույց տալ, որ ձեզ նման լափող ենք, ոչ մի բանով չենք տարբերվում: Աշխատում են անգրագետ մասսայի վրա, որը, ցավոք, քիչ չէ: Պետք է մարդկանց բացատրել մի բան՝ այդ մանկապարտեզները, որ սարքում են, այդ ասֆալտը, որ անում են, այնքան մեծ պարտքերի արդյունքում է արվում, որ անգամ իրենց թոռների թոռները՝ դեռ չծնված, մեծ պարտքերի տակ են: Սերժ Սարգսյանն իր կյանքում, հավանաբար, մի ճիշտ բան է ասել, որ դպրոցները սարքելով, ճանապարհներ սարքելով՝ թալան են անում: Ավտոբուսների մեջ անամոթաբար պարում են, իսկ ինչո՞ւ չպարեն, եթե մեկ տարվա կտրվածքով այդքան պարգեւավճարներ են ստանում»:

ՍՅՈՒԶԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՔՊ-ԱԿԱՆՆԵՐՆ ՈՒՏՈՒՄ ԷԻՆ, ԻՍԿ ՄԱՐԴԻԿ «ԼԱՅՎԻ» ՏԱԿ ԳՐՈՒՄ ԷԻՆ. «ԱՐՑԱԽԸ ՀԱՄՈ՞Վ ԷՐ»

Եթե ցանկանում եք կտրվել երեւանյան տխուր իրականությունից, իրանական պատերազմի սարսափներից, ծառերի սպանդից, որը ծավալվում է պատուհանից այն կողմ, մեր առօրյայի մաս կազմող սպանություններից, աղքատությունից, Ալիեւի ռազմատենչ հայտարարություններից, հետեւեք վարչապետ Փաշինյանի մարզային այցելություններին, ֆեյսբուքյան «լայվերին», թոշակառուների հետ զրույցներին, դիտեք «Ուրախ ավտոբուսի արկածները» նախընտրական սերիալը, որը ցուցադրվում է ամեն շաբաթ-կիրակի: Մի օգտատեր վարչապետի մարզային «սերիալի» տակ գրել էր՝ «Ֆրեդի Կրյուգերի արկածները», բայց դե, նա երեւի չար ու նախանձ, ՔՊ-ի լավը չուզող ընդդիմադիրներից է: Իսկ վարչապետի բեմադրած սերիալում դուք կտեսնեք մի ուրիշ՝ իրական Հայաստան:

ՈՒ ՉԵՂԱՎ ՄԵԿԸ, ՈՐ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՍԵՐ՝ ԻՍԿ ԴՈՒ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՏՎԱԾ 7 ՄԼՆ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐԸ ՍՏԱՑԱ՞Ր, ԼԱՎ ԷՐ, ՉԷ՞

Այս հանգստյան օրերին նա թիմով քշել-հասել էր Սյունիք, կանգառներ արել Արենիում, Վայքում, Աղավնաձորում: Գոհ ու երջանիկ քաղաքացիները «սելֆի» լուկի նման արտաբերեց, թե քաղաքացին կարող է կանչ գրանցել, եւ ընտանեկան բժիշկը կգա: Ծեր թոշակառուն երբեք ո՛չ տեսել, ո՛չ էլ լսել էր ընտանեկան բժշկի մասին, չգիտեր, որ Սիսիանում հիմա նման ծառայություն կա, ու ապշահար նայում էր հեքիաթի կախարդ Անահիտին: Իսկ Սյունիք այցելած վարչապետը թոշակի 10 հազար դրամը տժվժիկ էր դարձրել: Իրեն հանդիպած բոլոր թոշակառուներին հիշեցնում էր, որ ապրիլից 10 հազարով շատ է տալու նրանց, ու չեղավ մեկը, որ վարչապետին ասեր՝ իսկ դու մեր ժողովրդի տված 7 մլն պարգեւավճարը ստացա՞ր, լավ էր, չէ՞:

ՄԵԿԸ ԳՐԵԼ ԷՐ՝ ՇԱՏ ԵՆՔ ՍԻՐՈՒՄ ՔԵԶ, ՎԱՐՉԱՊԵՏ ՋԱՆ, ՄՅՈՒՍԸ ԳՐԵԼ ԷՐ՝ «ԱՍՅՈԼ»

Սիսիանում մի «պուզատի» տատիկ՝ Սեդա Ղազարյանը, փոքր խանութի տեր, որի թոշակը 80 հազար դրամ է, Իլոն Մասկի գիրքն էր կարդում: Վարչապետը շատ էր զվարճել այն փաստից, որ իր երկրում կան նման բիզնեսմեն տատիկներ: «Հլը եկեք, տեսեք՝ տատին ինչ ա կարդում»,- մի քանի անգամ բղավեց նա՝ իր խմբին ներս կանչելով, ապա նորից թոշակի, հետվճարի ու ապահովագրության երգը երգեց:

Արմինե Խաչատրյանը՝ Աղիտու գյուղում տուրիզմ զարգացնող մի Միամիտ ժողովուրդ: Չի հասկանում, որ վարչապետն էդքան հարց չի կարող հիշել, որ նա չի եկել իրենց պրոբլեմները լուծելու, այլ եկել է կառավարության արած աշխատանքը ցուցադրելու, կոպիտ ասած՝ նախընտրական քարոզի: «Գրեք իմ մեյլին», «հերթով բոլորը կանենք», «հիմա չենք արել, հետո կանենք», «կսարքենք, կլուծենք, սաղ կանենք», «հիմա խաղաղությունն է ամենակարեւոր հարցը, երկրորդը ջուրն է լինելու»՝ աջ ու ձախ խոստումներ էր շտայլում Նիկոլը, ինչը մեր օրենսգրքով նույնպես ընտրակաշառք է: Սիսիանցիները նրա համար դիդակտիկ նյութ էին՝ ՔՊ-ականների «նվաճումները», աջակցության ծրագրերը ցույց տալու, խոստումներ շռայլելու: Ասենք, եթե մարդն ասում էր՝ հիվանդ եմ, նրան ուղարկում էր Սիսիանի նոր բժշկական կենտրոն, որը դեռ չկա, բայց կբացվի մինչեւ մայիս: Եթե մարդն ասում էր, որ շուտով երեխա է ունենալու, կանչում էր Արսեն Թորոսյանին ու ներկայացնում հիպոթեքի գծով աջակցության ծրագիրը, որ եթե մինչեւ 35 մլն դրամանոց տուն վերցնի, մոտ 500 հազարը կառավարությունը կտա: Մի տղամարդու նա խոստացավ այդ աջակցությունը, բայց սա, իհարկե, ընտրակաշառք չէր, այլ՝ «աջակցության ծրագիր»: «Երեխան՝ ձեզանից, աջակցությունը՝ մեզանից»,- գոհ-գոհ ասում էր Նիկոլը: Անահիտ Ավանեսյանն էլ հենց կամերա էր տեսնում, սրտիկ էր անում ու կեղծ ժպիտով քարանում խցիկի առաջ: «Երկինք-գետին շնորհակալ եմ»,- սուպերքծնանքով՝ Փաշինյանին մոտեցավ վարչական ղեկավար մի կին ու բողոքեց, թե Ույծ գյուղի եկեղեցին լավ չեն վերականգնում: Վարչապետը լարվեց, խոստացավ հետեւել:

ՈՉԻՆՉ, ՈՐ ԳՅՈՒՂԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ ԳՆԱՆ ՀԵՌԱՎՈՐ ԳՅՈՒՂԵՐ, ԴԱՍ ԱՆԵՆ, ԳԱՆ

Սիսիանում Նիկոլն անցնում էր կեղտոտ բակերով, մտնում էր չռռացող, խոնավությունից փլուզված առաստաղներով մուտքեր, թակում պատուհաններն ու գովազդային գործակալի նման գոռում. «Իսկ դուք գիտե՞ք, որ առողջության ապահովագրություն ունեք, իսկ դուք օգտվե՞լ եք հետվճարից, գոհ եք, ի՞նչ եք զգում, հլը պատմեք»: Գտավ մի ծեր թոշակառուի, որը սրտի անվճար վիրահատության էր ենթարկվել, ու էյֆորիայի մեջ ընկավ. «Ոչ մի բան չվճարեցի՞ք: Հա-հա-հա: Վիրահատվեցիք ու ոչ մի բան չվճարեցի՞ք: Վիրահատությունն անվճար չի, պարզապես ձեր փոխարեն վճարում է կառավարությունը»: Մեկ խոստանում էր, մեկ հրաժարվում ինչ-որ բան անել: Նույնիսկ «պրինցիպ ընկավ», երբ մի տղամարդ խնդրեց, որ իրենց գյուղի դպրոցը չքանդեն, սպասեն, երեխաները վերջին զանգն անեն, նոր քանդեն: Նիկոլի վերդիկտը դաժան էր՝ պետք չէ շինարարական ծրագրերի ժամանակացույցը խոչընդոտել, երեխա են, էլի, թող խոտերի մեջ մի տեղ վերջին զանգ անեն: Խոզնավարում էլ փակվող դպրոցի, սահմանը դատարկվելու մասին հարցրին: Ասաց, որ ինքն իր երեխաներին օրական վեց կիլոմետր հեռու դպրոց է տարել ու բերել՝ իր հաշվին, որ երեխան նորմալ կրթություն ստանա: Ոչինչ, որ գյուղի երեխաները գնան հեռավոր գյուղեր, դաս անեն, գան: «Գյուղ տանող ճանապարհը նորոգում ենք, ավտոմեքենա ենք ձեռք բերում, որ մեքենան հավաքի երեխաներին, հետո տանի իրենց գյուղ»,- ասաց Փաշինյանը: Իսկ մարդիկ ուրիշ բան են ուզում հասկացնել, որ գյուղերն առանց դպրոցի դատարկվելու են:

Գորիսում Փաշինյանը հարմարվողականության մասին ճառ ասաց, այն մասին, որ, այ, հիմա, էս պահին լավ է: «Տեսեք, հիմա մեզ համար կանգնած, իրար հետ խոսում ենք: Այո, հարցեր կան: Աշխարհում որեւէ երկիր չկա, որ հարց չլինի, Հայաստանն ինչքան էլ հզոր լինի, հզորության լիմիտ ունի: Էսօր աշխարհում ուժի 90 տոկոսը կենտրոնացած է 20 տոկոս երկրներում: Պետք է հարմարվել իրողությանը, ոչ թե նկատի ունեմ հանձնվել, այլ՝ հարմարվել: Նավը ճրբ ա հաջող. երբ որ հարմարվում ա քամուն»,- ճառ էր ասում՝ ինքն իրեն շարունակ հակասելով ու նախկին ասածները հերքելով: Ու ոչ ոք չհարցրեց՝ հիմա մենք հարմարվում ենք Ալիեւի՞ն: Մի գորիսեցի կին էլ մոտեցավ, թե. «Պարոն Փաշինյան, ուզում ենք՝ էն անկապ լրագրողներին վերջ տաք»: Վարչապետն ասաց՝ բա խոսքի ազատությո՞ւնը, ժպտաց ու առաջ անցավ: Ինչպես միշտ, այս անգամ էլ Նիկոլն առատ առեւտուր էր անում՝ լավաշ, փշատ, ընկույզ: ՔՊ-ականներն ուտում էին, իսկ մարդիկ «լայվի» տակ գրում էին. «Արցախը համո՞վ էր»:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՆ ԱՐԵՑԻՆ ՈՒ ՄԵՂԱԴՐՅԱԼԻՆ ԱԶԱՏԵՑԻՆ

2025 թվականի ապրիլին մեղադրանք էր առաջադրվել Ազգային արխիվի մի խումբ աշխատակիցների, այդ թվում՝ արխիվի տնօրենի նախկին տեղակալ Սոնյա Միրզոյանին, որին ազատել էին աշխատանքից եւ տնային կալանք սահմանել: Քննչական կոմիտեից միայն հայտնել էին, որ վարույթը նախաձեռնվել է պետական դավաճանության, նաեւ «օտարերկրյա պետության ներկայացուցչի կողմից ՀՀ ինքնիշխանության, տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգությանն ի վնաս օգտագործելու համար տեղեկություններ հավաքելու դեպքերի առթիվ»՝ ՀՀ քրօր. 418-րդ հոդվածի 1-ին մասով (դավաճանություն) եւ 424-րդ հոդվածի 1-ին մասով (լրտեսություն): Այդ ժամանակ մենք եւ այլ լրատվամիջոցներ գրել էինք, որ մեր արխիվից ադրբեջանցիներին տեղեկություններ են փոխանցվել տարբեր տարիներին Հայաստանում բնակված ադրբեջանցիների քանակի, տեղաբաշխման մասին, որոնք ծառայեցվելու են իրենց շահերին:

Նախաքննությունը տեւել է մեկ տարի եւ արդեն ավարտվել, վարույթն ուղարկվել է դատախազին՝ հաստատման: Այս քրեական գործում, բացի Սոնյա Միրզոյանից, մեղադրյալի կարգավիճակ ունի նաեւ Անահիտ Քոչարյանը, որին ՔԿ-ն մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ նա, զբաղեցնելով Ազգային արխիվի փաստաթղթերի թվայնացման եւ էլեկտրոնային շտեմարանի վարման բաժնի պետի պաշտոնը, իր ազդեցությունն օգտագործել է ի վնաս պետական եւ ծառայողական շահերին, իր ծառայողական պարտականությունները պատշաճ չի կատարել, ինչն էլ վնաս է հասցրել կազմակերպության շահերին:

Նախաքննության ընթացքում, մեր տեղեկություններով, փոխվել է Սոնյա Միրզոյանի խափանման միջոցը. դատարանը նրա տնային կալանքը փոխել է վարչական հսկողությամբ, ինչն ավելի մեղմ խափանման միջոց է, իսկ Անահիտ Քոչարյանի նկատմամբ կիրառվել է «բացակայելու արգելք» խափանման միջոցը: Ստացվում է, որ «պետական դավաճանության» մեջ մեղադրվող տիկնոջ մեղադրանքն այնքան հիմնազուրկ է եղել, որ դատարանը բավականին մեղմացրել է խափանման միջոցը, հակառակ դեպքում՝ նա կլիներ բանտում, ինչպես մյուս նմանատիպ քրեական գործերի դեպքում է: Մենք փորձեցինք զրուցել Միրզոյանի պաշտպան Տիգրան Գրիգորյանի հետ, սակայն նա մեր հեռախոսազանգերին չպատասխանեց:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔ

ԱՅՍ ԽՈՀՈՐԱՑՄԱՆԸ ՆՈՒՅՆԻՍԿ ՔՊ-ԱԿԱՆՆԵՐՆ ԵՆ ԴԵՄ

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Առաջիկայում եւս համայնքների խոշորացման գործընթաց է նախատեսված Հայաստանում: 9 համայնք՝ 80 բնակավայրով, կմիավորվեն եւ կդառնան 3 խոշորացված համայնք: «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծն ընդունվել է կառավարության նախորդ նիստի ժամանակ: ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը, ներկայացնելով հարցը, նշել է, որ 3 խոշորացված համայնքները ձեւավորվելու են 3 մարզում. Ստեփանավան համայնքը՝ Լոռու մարզում, որը ներառելու է Ստեփանավան, Գյուլագարակ եւ Լոռի բերդ համայնքները, ընդհանուր թվով՝ 20 բնակավայր: Գորիս համայնքը՝ Սյունիքի մարզում, որը ներառելու է Գորիս, Տաթեւ, Տեղ համայնքները, ընդհանուր առմամբ՝ 28 բնակավայր, Եղեգնաձոր համայնքը՝ Վայոց Ձորի մարզում, ներառելու է Եղեգնաձոր, Արենի, Եղեգիս համայնքները, ընդհանուր առմամբ՝ 32 բնակավայր:

Մինչ իշխանությունը որոշում է խոշորացված համայնքների ճակատագիրը, գյուղական համայնքների բնակիչները, անգամ՝ ՔՊ-ականներից ոմանք, դեմ են այդ խոշորացմանը: Վայոց Ձորի մարզ այցելության ժամանակ քաղաքացիներից մեկը նույնիսկ դիմեց Փաշինյանին, թե սխալ է «մեր համայնքի» խոշորացումը: Մարդիկ վստահ են, որ կրկնակի խոշորացումը դրական արդյունք չի ունենա: «Մի անգամ խոշորացրին՝ հասկացանք, այն էլ դա արեցին առանց մեզ հետ քննարկելու: Հիմա նույնն են անելու, թող հանրային լսումներ անեն, մեր ձայնը լսեն, հասկանան՝ մենք կո՞ղմ ենք երկրորդ անգամ խոշորացմանը, թե՞ դեմ ենք: Հեռավոր գյուղերի համար խնդիր կլինի: Եթե հիմա մեզ տեղեկանք է պետք կամ ինչ-որ հարցով հասնում ենք Լոռի բերդի համայնքապետարան, արդեն ստիպված կլինենք հասնել Ստեփանավան: Ստեփանավան հասնելու համար, եթե անձնական մեքենա չունես, մի ամբողջ օր է պետք՝ Ստեփանավան հասնելու եւ վերադառնալու համար»,- մեզ հետ զրույցում ասացին Լոռվա մարզի Լոռի բերդ համայնքների բնակիչները:

Լոռի բերդ համայնքի «Ապրելու երկիր» խմբակցության անդամ **Աննա Գրիգորյանը** մեզ հետ զրույցում նշեց, որ խոշորացումը կունենա եւ դրական, եւ բացասական կողմ. «Առաջին անգամ համայնքը խոշորացրին, կոնկրետ մեր համայնքում մի շարք խնդիրներ լուծվեցին՝ աղբամաններ են տեղադրվել, ճանապարհներ ասֆալտապատվել, գյուղն արդեն մանկապարտեզ ունի, խոշորացումն իր դրական արդյունքը տվեց: Բացասական կողմն այն է, որ բազմաթիվ հարցեր լուծելու համար մարդիկ իրենց գյուղից պետք է հասնեն մարզկենտրոն, որը եւ ավելորդ ժամանակի, եւ գումարի վատնում է: Ավելի մեծ խոշորացման կարիք չկա, բնական է՝ ես դեմ եմ այդ խոշորացմանը»: «Դա նորմալ չէ, մեկ խոշորացրին, գյուղապետարանում նույն վարչական ղեկավարը կա, օպերատորը կա, հավաքարար ունի, իմաստը ո՞րն է, որ նորից խոշորացնեն: Միայն գյուղացու համար են վատ բան անում: Մի տեղեկանքի համար հասնելու են չգիտես ուր: Ասենք, ես մեքենա ունեմ, իմ մեքենայով կգնամ, բայց մյուս գյուղացիները ինչ անեն: Գյուղական համայնքներ կան, որ ավտոբուս չունեն, կամ որոշ ժամերի է ավտոբուսն աշխատում»,- ասաց ավագանու անդամ **Վանո Չատինյանը**:

Լոռի բերդի ավագանու ՔՊ-ական խմբակցության անդամ **Անահիտ Սիմոնյանը** նույնպես համայնքների կրկնակի խոշորացումը դրական չի գնահատում. «Ինձ թվում է՝ երկրորդ խոշորացումն ավելի վիճակը կվատացնի, հիմա ես Ձեզ ասեմ, Լոռի բերդ համայնքը կարողանում է բյուջեի կատարողականը 150 տոկոսով կատարել: Բնակիչները տեսնում են, որ գյուղերում ինչ-որ բան փոխվել է, ու մենք չունենք խնդիր՝ հարկերի հավաքագրման հետ կապված: Որքան խոշորացվի, այնքան աշխատանքը կդժվարանա, ու հարկերի հավաքագրումը եւ այլ միջոցառումներ ավելի կվատանան, դրական արդյունք չի ունենա: Բացատրեմ, թե ինչու. ես ապրել եմ Յաղդանում: Ամեն տարի 100 տոկոսով հարկերը վճարվել են, եւ բարեկեցիկ կյանքն էլ ապահովվել է: Երբ առաջին անգամ խոշորացվեց, շատ դժվարությամբ կարողացան հարկերը հավաքագրել: Մի քիչ էլ համայնքի ղեկավարից եւ իր թիմից էր կախված, բայց նաեւ մեծ նշանակություն ունեն խոշորացման հետ կապված բնակիչների պարտականությունները: Տարբեր կառույցներում երկար ժամանակ աշխատել եմ, տարբեր մարդկանց հետ եմ շփվել, կարծում եմ, որ այս խոշորացումը դրական արդյունք չի տա»:

Գյուլագարակ համայնքի ավագանու «Ապրելու երկիր» խմբակցության անդամ **Վրույր Այվազյանը** նշում է, որ կարեւորը խոշորացումը չէ, այլ՝ այն, թե ով է լինելու դերակատարը. «Խոշորացումը կախված է դերակատարներից, հարցի որոշիչ կողմը լինելու է համայնքապետը, եւ թե ինչպես կբաշխվեն ռեսուրսները: Ի վերջո, համայնքների խոշորացման գաղափարախոսությունն այն է, որ փոքր ռեսուրսները գումարում են իրար, որ ծառայեն ավելի խոշոր նպատակի, որից պետք է համամասնորեն օգտվեն նույն բնակավայրում ընդգրկված մյուս համայնքները: Եթե համայնքի ղեկավարը խելքը գլխին եւ իսկապես համայնքի մասին մտածող մարդ լինի, այդ ռեսուրսները կբաշխվեն համամասնորեն, եւ ամեն բնակավայր այդ ռեսուրսներից կունենա մաս՝ մի տեղ ճանապարհ կկառուցեն, մի տեղ՝ կգազիֆիկացնեն, մշակույթի տուն կկառուցվի, իսկ անբարեխիղճ համայնքի ղեկավարի դեպքում փոքր գյուղերը, որ պետք օգտվեին, չեն օգտվի, կանտեսվեն: Այս պարագայում, եթե իրենք ունեին հնարավորություն՝ ինքնուրույն իրենց բյուջեն որոշելու, հիմա կվճարեն հարկեր, որն ընդհանրապես իրենց գյուղ չի վերադառնա»:

Ինչ կտա համայնքների կրկնակի խոշորացումը. հարցրինք նաեւ Կողես բնակավայրի վարչական ղեկավար **Արսեն Մամաջանյանին**: «Կանխատեսում անելը մի քիչ դժվար է, հեռավորության առումով Լոռի բերդի եւ Ստեփանավանի միջեւ այդքան էլ մեծ հեռավորություն չկա, բայց դե … Լոռի բերդից Ստեփանավան 3 կմ տարբերություն է, ուղղակի խնդիրները մի քիչ այլ են: Այս փուլում խոշորացնելը չգիտեմ ինչ կտա, քանի որ խոշորացվել են համայնքները, արդեն կայուն զարգացում են ապրում, հաջողություններ են գրանցում: Կրկին խոշորացումը կնպաստի, թե խոչընդոտ կլինի՝ դժվարանում եմ ասել»:

Հիշեցնենք, որ 2025 թ. հուլիսին, ՀՀ կառավարության որոշմամբ, որը հետագայում ընդունվեց նաեւ ԱԺ-ում, միավորվեցին նաեւ Խոյ եւ Վաղարշապատ համայնքները: Ընդ որում, դա տեղի ունեցավ դարձյալ ընտրություններից առաջ, որպեսզի Խոյի նախկին համայնքապետ Արգիշտի Մեխակյանը կարողանա մի կերպ ընտրվել խոշորացված համայնքում: Վաղարշապատում ՏԻՄ ընտրությունները տեղի ունեցան 2025-ի նոյեմբերին, եւ ՔՊ-ն մեծ դժվարությամբ՝ ադմինիստրատիվ ռեսուրսի եւ տեռորի միջոցով կարողացավ իշխանություն վերցնել:

ՊԱՊՈՅԱՆ, «ՄԱՅՐԻԿ ՈՉԽԱՐԸ» Ո՞ՐՆ Է, ԽՈՅՆ ԷԼ «ՀԱՅՐԻ՞Կ ՈՉԽԱՐՆ Է»

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը Ֆեյսբուքում տեսանյութ է տեղադրել եւ գրել. «Սովորաբար, ոչխարը մեկ ծննդաբերության ժամանակ ունենում է 1 կամ 2 ձագ: Հազվադեպ կարող է ունենալ 3 ձագ, իսկ միանգամից 4 ձագ ունենալը շատ քիչ հանդիպող բան է: Մեր ֆերմերներից մեկի մայրիկ ոչխարը միանգամից 4 գառնուկ է ունեցել»: «Մայրիկ ոչխարը» ո՞րն է, ոչխարն ինքնին էգ է, մայր, այդ դեպքում խոյին պետք է կոչեք «հայրիկ ոչխար»:

Միանգամից 4 գառ ծնելու մեջ ո՞րն է ՔՊ-ական իշխանության եւ, մասնավորապես, գյուղատնտեսության ոլորտը կառավարող էկոնոմիկայի նախարարության եւ անձամբ նախարար Պապոյանի ներդրումը: Նախարար Գեւորգ Պապոյանը փոխանակ հիմնավոր կերպով զբաղվի գյուղատնտեսության ոլորտում առկա, տարիներով չլուծվող հիմնախնդիրներով, կենսաբանական պատահականության արդյունքում 4 գառ ծնած ոչխարի մասին հրապարակում է արել: Իսկ գյուղատնտեսության հիմնախնդիրների լուծումը նախարար Պապոյանի անմիջական գործն ու պարտականությունն են:

ՔՊ-ական իշխանությունը 2018-ին վերացրեց գյուղատնտեսության նախարարությունը: Դրա գործառույթները ներառվեցին էկոնոմիկայի նախարարության մեջ, որի կազմում գործում են բուսաբուծության, անասնաբուծության, գյուղատնտեսական խորհրդատվության եւ նորարարությունների, ագրովերամշակման, գյուղատնտեսական ծրագրերի նախագծման, գյուղատնտեսական ծրագրերի իրականացման վարչություններ: Սակայն որքանո՞վ են այդ վարչությունները նպաստում գյուղոլորտի խնդիրների լուծմանը: Նախարար Գ. Պապոյանին տեղեկատվական հարցում էի արել դեռ 2025 թ. հոկտեմբերի 10-ին եւ պատասխանից տեղեկացա, որ Հայաստանում գյուղատնտեսական նշանակության հողերը 2 միլիոն 40 հազար 816, 8 հեկտար են, որից ոռոգվում է ընդամենը 156 հազար 500 հեկտարը: Իսկ 156 հազար հեկտարից ընդամենը 6 378 հեկտարն է կաթիլային եղանակով ոռոգվում: ՀՀ-ում 3 920 հեկտար ինտենսիվ այգի կա, 62 հատ «խելացի անասնաշենք» եւ 1 հատ խոշոր անասնաբուծական համալիր, որոնցում, ընդհանուր առմամբ, պահվում է 2 542 խոշոր եղջերավոր անասուն: Սա Հայաստանի գյուղատնտեսության տխուր պատկերն է:

Գյուղացիների բերքը, ինչպես դարեր առաջ, կախված է «երկնքի ծերից»՝ կարկտահարությունից, եղանակի տատանումներից: Իմ հայրենի Տավուշի մարզի 4 համայնքներից միայն Նոյեմբերյանում է հակակարկտային 14 կայան տեղադրված, մարզի Բերդ, Դիլիջան, Իջեւան համայնքներում հակակարկտային կայաններ չկան: Նիկոլ Փաշինյանի իշխանության 8 տարում Տավուշի մարզում հակակարկտային ոչ մի կայան չի տեղադրվել:

Նախարար Պապոյանին հարցում եմ արել, թե որ թվականին է նախատեսված Հայաստանում ներդնել գյուղատնտեսության պարտադիր ապահովագրություն: Նախարարությունից հայտնել են. «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության «Դիվերսիֆիկացում եւ ռիսկերի կառավարում» սկզբունքում եւ «Բարձրացնել գյուղատնտեսության ոլորտի մրցունակությունը եւ արդյունավետությունը» առաջնահերթությունում կարեւորվում է ապահովագրական համակարգի աստիճանական ներդրումը: 2019 թվականից մեկնարկել է գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման պետական աջակցության փորձնական ծրագիրը, որի հիմնական նպատակն է՝ գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմների հստակեցումը եւ ամբողջական համակարգի ներդրումը: Փորձնական ծրագիրը դեռեւս իրականացվում է, հանրապետության ընդհանուր տարածքում գյուղատնտեսական պարտադիր ապահովագրության ներդրման ժամկետները դեռեւս հստակ չեն»:

7 տարի փորձնական ծրագիր են անում, սակայն պարտադիր ապահովագրության ներդրման ժամկետները դեռեւս հստակ չեն: Հայաստանի մարզերում պարբերաբար կենդանիների դաբաղ եւ այլ հիվանդությունների բռնկումներ են լինում, արտերկրից ներկրվող բույսերի բուժանյութերի զգալի մասն անորակ է, դրանք վաճառվում են ոչ մասնագետների կողմից, որոնք չեն կարող բուժանյութերի օգտագործման ձեւերի վերաբերյալ արդյունավետ խորհրդատվություն իրականացնել: Գյուղացիներն ամեն տարի խնդիրներ են ունենում աճեցրած բերքը ժամանակին իրացնելու գործում: Ստիպված են լինում քրտինքով աճեցրած բերքն էժան վաճառել, որպեսզի այն չփչանա: Ա՛յս հիմնախնդիրներով պետք է զբաղվի նախարար Պապոյանը, ոչ թե 4 գառ ծնած «մայրիկ ոչխարի» գովազդով:

ՀՈՒՇԻՍ

ԱՌԱՋԻԿԱ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼ ԱԶԱՏ ԵՎ ԱՐԴԱՐ

Հայաստանի Հանրապետության պատմության ամբողջ ընթացքում չի եղել դեպք, երբ ընտրությունների նախաշեմին հիմնական ընդդիմադիր ուժի առաջնորդը զրկված լինի ազատությունից, գտնվի կալանքի տակ, թեկուզ՝ տնային: Անգամ իշխանության ներկայացուցիչների կողմից հրապարակայնացված եւ իշխանության կողմից քարոզվող սոցիոլոգիական հարցումներով Սամվել Կարապետյանի գլխավորած «Ուժեղ Հայաստան» կուսակցությունն ամենամեծ հանրային աջակցությունը վայելող ընդդիմադիր ուժն է, փաստացի ընդդիմության առաջնորդը: Մարտի 14-ին Հակակոռուպցիոն կոչվող դատարանը եւս մեկ ամսով երկարաձգեց «Ուժեղ Հայաստան» կուսակցության նախագահ Սամվել Կարապետյանի տնային կալանքը, որը նրան զրկում է ազատ քաղաքական գործունեություն իրականացնելու հնարավորությունից:

Ժողովրդավարությունը միայն ընտրության առկայությունը չէ, անգամ ամենաբռնապետական երկրներում անցկացվում են ընտրություններ, սակայն երբ սահմանափակված է ընդդիմադիր ուժերի եւ առաջնորդների մասնակցությունն այդ ընտրություններին, դրանք ոչ թե ընտրություններ են, այլ՝ իշխանության կողմից սեփական վերանշանակումը լեգիտիմացնելու անհաջող փորձ: Ժողովրդավարությունը ենթադրում է ազատ եւ արդար ընտրությունների անցկացում, երբ երկրի բոլոր քաղաքացիները եւ քաղաքական ուժերը հնարավորություն ունեն ազատորեն մասնակցել ընտրական պրոցեսներին, չհետապնդվել իրենք հայացքների եւ քաղաքական գործունեության համար:

Վարչապետի պաշտոնը զբաղեցնող Նիկոլ Փաշինյանն արդեն տեւական ժամանակ է, օգտագործելով պետական՝ հանրային միջոցները, քարոզարշավ է իրականացնում, գնում է մարզեր, հանդիպում ընտրողների հետ, հանրային միջոցներով կառուցված ճանապարհները, մանկապարտեզները, դպրոցները կամ թունելները ներկայացնում որպես իր կողմից իրականացված աշխատանք: Արդյո՞ք նույն հնարավորությունն ունի հիմնական ընդդիմադիր ուժի առաջնորդը՝ Սամվել Կարապետյանը. նա զրկված է ոչ միայն ազատ տեղաշարժի, այլեւ խոսքի ազատության իրավունքից, չի կարող իր տնից դուրս գալ, շփվել մարդկանց հետ, տեսակետ կամ կարծիք արտահայտել: Ավելին՝ Փաշինյանն ընդունել է այնպիսի օրենք, որով նրա հիմնադրած բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող գործունեությունն արգելված է, քանի որ ցանկացած պահի դա կարող են հռչակել որպես ընտրակաշառք եւ այդ հիմքով քրեական գործ հարուցել, նոր մարդկանց կալանավորել եւ խոչընդոտել քաղաքական գործունեությունը: Այսպիսով Փաշինյանը հանրային միջոցներն օգտագործում է իր քարոզարշավի համար, հանրության միջոցով իրականացվող աշխատանքը ներկայացնում է որպես իր գործունեության արդյունք, իսկ իր քաղաքական մրցակցին զրկել է անգամ սեփական միջոցներով տեղաշարժվելու, խոսելու եւ գործելու հնարավորությունից: Ընդ որում, Սամվել Կարապետյանը քրեական հանցագործ չէ, նա հետապնդվում է բացառապես իր քաղաքական հայացքների համար՝ միայն այն պատճառով, որ հայտարարել է Հայ առաքելական եկեղեցին իր ձեւով պաշտպանելու մտադրության մասին: Որեւէ հակաօրինական բան չի արել, գործողություն չի ձեռնարկել, բայց Նիկոլ Փաշինյանը նրա ասածի մեջ իր իշխանության նկատմամբ սպառնալիք է տեսել եւ հրահանգել է կալանավորել նրան. Կարապետյանն արդեն 9-րդ ամիսն է՝ անազատության մեջ է:

Հայաստանի պատմության մեջ սա աննախադեպ իրավիճակ է: Հայաստանը երբեք չի փայլել իր ժողովրդավարությամբ, ընտրությունները չեն եղել կատարյալ, բայց իշխանությունը երբեք նախընտրական փուլում չի կալանավորել ընդդիմության առաջնորդին կամ առաջնորդներին, խոսքը հիմնական ընդդիմադիր քաղաքական ուժերի առաջնորդների մասին է: Նույնիսկ հետընտրական փուլում, երբ ընդդիմությունը փողոցում բողոքարկել է քվեարկության պաշտոնական արդյունքները՝ հայտարարելով դրանք կեղծված, ընդդիմության առաջնորդները եղել են անձեռնմխելի. 1996 թվականին Լեւոն Տեր-Պետրոսյանը չկալանավորեց Վազգեն Մանուկյանին, չնայած տեղի էր ունեցել հարձակում խորհրդարանի շենքի վրա, 2003-2004 թվականներին, երբ ոստիկանական ուժերը ներխուժեցին ընդդիմադիր ՀԺԿ, ԱՄ եւ «Հանրապետություն» կուսակցությունների գրասենյակներ, կալանավորվեցին բազմաթիվ ընդդիմադիր գործիչներ, սակայն դարձյալ կուսակցության ղեկավարները մնացին ազատության մեջ: Անգամ 2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններից հետո իշխանությունն ընդդիմության առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանին կալանավորելու որոշում չկայացրեց:

Արդյո՞ք 2026 թվականի խորհրդարանական ընտրությունները կարող են համարվել ժողովրդավարական, երբ իշխող կուսակցության ղեկավարն ազատորեն շրջում է մարզերում, իսկ նրա քաղաքական հիմնական մրցակիցը զրկված է անգամ սեփական տնից դուրս գալու եւ մարդկանց հետ շփվելու տարրական ազատությունից: Սա հռետորական հարց է, որովհետեւ դրա պատասխանն ակնհայտ է. առանց ազատ մրցակցության չի կարող լինել ազատ ընտրություն, առանց ազատ ընտրության՝ ժողովրդավարություն: Բռնապետության պայմաններում չեն լինում ազատ ընտրություններ, բռնապետությունը տապալվում է համաժողովրդական պայքարով:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՊԵՏՔ ԼԻՆԻ՝ ՈՒՐԻՇ ԲԱՆ ԷԼ ՅՈՒՅՑ ԿՏԱՄ

Ֆեյսբուքում ատրճանակի նկար ես դնում՝ բլոկում են: Երկրի վարչապետն ասում է՝ տանեմ, մեր ողջ սպառազինությունը ցույց տամ, աշխարհը գլխին է հավաքվում: Ինչպե՞ս հասկանամ այս ֆենոմենը:

Կապանում, հավանաբար առաջնագծի մոտիկությունից, նա իրեն կորցրել էր: Թե բա՝ «ես 2-3 ամիս առաջ հայտարարություն արեցի, որ այն քաղաքացիները, որոնք ուզում են տեսնել, թե ինչ ենք ձեռք բերել, կտանեմ, ցույց կտամ: Արդեն մի քանի խումբ հրավիրել, տարել, ցույց եմ տվել, սակայն մարդկանց թիվն այնքան մեծ է, որ եկանք այն եզրակացության, որ բոլորին պետք է ցույց տանք, հրապարակային պետք է ցույց տանք»: Խոսքն այս տարիներին, մասնավորապես 2022 թվականից հետո, իրենց ձեռք բերած զենք-զինամթերքը ցույց տալու մասին է: Բայց կամ, արդյոք, դրա անհրաժեշտությունը՝ չգիտեմ: Եվ կամ՝ այդ ինչ խմբերի է տարել, ցույց տվել մեր զինանոցը: Սուրեն Պապիկյանը մի առիթով 2-3 հատ պարսատիկ ցույց տվեց: Դա տեսել ենք: Ամոթից գետինը մտա: Հնդիկներն այդ զենքերը որսի ժամանակ են օգտագործում: Սրանք, դու մի ասա, ձեռք են բերել ու մարդկանց խմբեր են հավաքում, որ տանեն, ցույց տան: Ցանկացողներին, գոնե, ավտոբուսո՞վ եք տանելու: Ինչ պակաս էքսկուրսիա կստացվի… Զարկ տանք զբոսաշրջությանը դեպի զինապահեստներ… Ավտոբուսներն էլ՝ սրտիկներով, չէ՞: Իսկ ճանապարհին, բնականաբար՝ կարկանդակի, խաշած եգիպտացորենի, սուջուխի, թթու եւ սովորական լավաշի հյուրասիրություն:

Նորից եմ ասում՝ չեմ կարողանում հասկանալ սրա անհրաժեշտությունը: Մանավանդ ինքն էլ վախենում է, որ թշնամին հանկարծ դա կընկալի որպես ագրեսիայի դրսեւորում: Ասում է. «Մենք, սակայն, դա անում ենք խաղաղությունն ընդգծելով եւ խաղաղության համատեքստում. խաղաղություն է, մեր հարեւաններին հետ լարվածություն չկա, մեր հարեւանները, հույս ունենք, որ դա չեն ընկալի որպես ագրեսիվության ցուցադրություն»: Մարդ ես, ու թշնամիդ (յաման հարեւանդ) դա ընկալեց որպես ագրեսիվության ցուցադրություն… Ի՞նչ ես անելու: Իսկ եթե վստահ ես, որ «հարեւանդ» դա կարող է ընկալել այլ կերպ, քան հենց ագրեսիվությունն է, ապա ինչո՞ւ այդ ամենը չես ցուցադրում զինվորական շքերթով: Այդքան ավտոբուս վարձիր, զբոսաշրջիկների կերակրիր, զուգարանի հարցերը լուծիր… Ինչո՞ւ ես բարդացնում հարցը: Առջեւում քաղաքացու օրն է՝ ձեր տոնը… Բեր, հրապարակով մի քանի բան անցկացրու, վերջանա, գնա: Ձեռքի հետ էլ մեր զինվորների քայլերթը կտեսնենք, հագուկապը: Բա չիմանա՞նք, թե հետպատերազմյան «խաղաղության» այս տարիներին ինչ ռեֆորմներ եք իրականացրել բանակում: Այլապես տպավորություն է ստեղծվում, որ մեր երկրի ղեկավարն իր այս «հանդուգն» քայլով (տանեմ, սաղ ցույց տամ) ավելի շատ մեր խեղճությունը, քան հզորությունն է ուզում աշխարհին ցույց տալ: Ասում է՝ բոլորին ենք ցույց տալու…

Իր ոչ մի քայլի համար ժողովրդին հաշվետվություն չներկայացրած վարչապետը Կապանում հանկարծ հիշել է ժողովրդի ու նրա առաջ հաշվետու լինելու մասին: Ընտրություններից առաջ նման բաներ հաճախ են պատահում, եւ ես, կարծում եմ, ճիշտ եմ հասկանում նրա այս մղումը: 2-3 ամիս առաջ (իր հաշվարկներում ամեն ինչ պլյուս-մինուսով է) իրեն հարցրել էին՝ ո՞ւր եք մտցրել պարտքով վերցրած 8,5 միլիարդ դոլարը: Ասել էր՝ զենք ենք առել: Այսինքն՝ ստել էր, բայց քանի որ 8,5 միլիարդի զենքը կատակ բան չէ եւ կարող էր «հարեւանի» մոտ տպավորություն ստեղծել, թե Հայաստանն իսկապես «ագրեսիվ» տրամադրություններ ունի, Պապիկյան Սուրոյին կարգադրեց մի երկու հատ հնդկական պարսատիկ ցույց տալ: Ու հիմա, երբ ոչ ոք չի հավատում, որ սրանք 8,5 միլիարդի զենք են առել, ավելին՝ երբ բոլորը պնդում են, որ այդ գումարները փոշիացվել են, կորել պարգեւատրությունների ու վայելքների ծովում, որոշել են, այնուամենայնիվ, քաղաքացիներին նախընտրական հաշվետվություն տալ: Կապանում ասում է. «Ժողովրդի առաջ հաշվետվություն ենք ներկայացնելու, եւ դա, երեւի, մայիսին տեղի կունենա: Ցուցադրելու ենք միայն մեր իշխանության օրոք եւ հիմնականում 2022 թվականից հետո ձեռք բերված սպառազինությունը»: Ախր, մանիպուլյացիան թափվում է, է, վրայից… Էդ ո՞վ է Կապանից հասնելու Երեւան, որ մի հատ էլ տանես՝ պարսատիկներդ ցույց տաս: Ուրիշ հարցեր էլ կան՝ ինչո՞ւ հենց մայիսին, եթե ընտրությունները հունիսի 7-ին են, ինչո՞ւ միայն 2022 թվականից հետո ձեռք բերված զենքերը, եթե հայտնի է, որ 2020-ին էլ լիքը զենք ենք ձեռք բերել՝ չհաշված նվեր ստացած զենքերը, որ այդպես էլ չկրակեցին հանուն Արցախի ու մեր օկուպացված տարածքների:

ՀԳ. *Պարոն վարչապետ, դու ձախավեր կառավարման 8 «փայլուն» տարիներ ես ունեցել, եւ այդ տարիների հաշվետվությունն է, որ ժողովուրդը պահանջում է քեզնից: Թե բա՝ տանեմ, ցույց տամ… 8 տարվա անընդմեջ պարտություն… Ի՞նչ ես ցույց տալու:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

*Իրավապաշտպան **Լարիսա Ալավերդյանի** հետ զրույցում անդրադարձել ենք Բաքվում մեր պատանդառված գերիների ձերբակալության մութ կողմին եւ պատճառներին, թե ինչու նրանք ազատ չեն արձակվում:*

- Մեր գերիներին Բաքվում դատեցին որպես ահաբեկիչների, նացիստներ են անվանում: Ե՞րբ եւ որտե՞ղ էին այդ մարդիկ ահաբեկիչ կամ նացիստ ճանաչվել:

- Նախ, նրանք գերի կամ ռազմագերի չեն, նրանցից ընդամենը 2-ն են ռազմագերի, որոնք մասնակցել են 2020թ. ռազմական գործողություններին, եւ նրանց պահելն արդեն իսկ միջազգային իրավունքի դեմ հանցագործություն է: Դրա մասին կարելի էր հարց բարձրացնել միջազգային քրեական դատարանում, ինչը չի արվել: Մյուսները քաղաքական պատանդ են, որն արգելված է միջազգային իրավունքով: Եվ նրանց պատանդ լինելն ապացուցվեց, երբ 4 հոգու վերադարձրին 2 միջազգային հանցագործի դիմաց, որոնք էլ Թուրքիայի միջոցով վերադարձվեցին Սիրիայում գտնվող ահաբեկչական խմբավորմանը: Այդ պատանդներին, առաջին հերթին Արցախի քաղաքական ղեկավարությանը, դատում են ինչպես միջազգային ահաբեկիչների: Այնինչ 30 տարի ընթանում էին բանակցություններ, իսկ բանակցային գործընթացում ընդգրկված էին ԱՄՆ-ն, Ռուսաստանը եւ Ֆրանսիան: Ցույց տվեք մի փաստաթուղթ, թեկուզ՝ աշխատանքային, որտեղ Արցախի ղեկավարությանն անվանել են նացիստ, ֆաշիստ կամ ահաբեկիչ: Չկա այդպիսի բան:

- Մեր իշխանությունը մասնակից է այդ մարդկանց գերեվարության, պատանդառության հանցանքում:

- Մատը խառն է այս իշխանությունների. առանց ՀՀ վարչակազմի համաձայնության, էլ չեմ ասում՝ խնդրանքի, երբ խոսքը գնում է հատկապես Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության մասին, դա չէր կարող տեղի ունենալ: Խնդիրը, ահա, այդտեղ փնտրեք: Մնացածը, թե ինչ կբացահայտվի, ինչ արդյունք կունենա եւ ինչպիսի արձագանք կգտնի հասարակության մեջ, դեռ կտեսնենք: Բայց այս հասարակությունն այնքան ծեծված եւ նսեմացված է, որ կարող է ամեն ինչ էլ պարզվի, եւ որեւէ ակտիվ գործողություն տեղի չունենա: Եվ դրանից չէ, որ այս վարչակարգը վախենում է: Այս վարչակարգը վախենում է միայն ու միայն դրսի իր ղեկավարներից: Բացարձակապես նա չունի այն խնդիրը, թե ինչ կմտածի ժողովուրդն այստեղ: Այս ժողովրդին խաբելով են նրանք հասել իշխանության, եւ դա բոլորը գիտեն, արդեն բացահայտ է:

- Սամվել Բաբայանին բաց են թողնում, իսկ Վագիֆ Խաչատրյանին ձերբակալում են, որովհետեւ Սամվել Բաբայանի վարորդն է եղել: Ինչպե՞ս հասկանանք:

- Սամվել Բաբայանին ճանաչում եմ վաղուց եւ ասեմ, որ սիրտս ուղղակի մղկտում է: Երբ ինքը ծանր, գեներալին ոչ հարիր խոսքեր է ասել նույն մեր ջոցով առայժմ գործող ամենապղտոր ուժերի համար, լինի դա հավաքական Արեւմուտքը, թե լինի Ամերիկան: Խնդիրն այն է, որ Իրանի դեմ գործողություններն արդեն ցույց են տալիս, որ Արեւմուտքը համապատասխան կերպով չի գնահատում Իրանին՝ որպես հին քաղաքակրթություն: Հակառակը, իրենք աշխատում են հին քաղաքակրթություններն ուղղակի ջնջել: Բայց տեսնում ենք, որ իրենց հաշվարկները տապալվում են առաջին իսկ օրերից: Մենք պետք է հասկանանք, թե նրանց համար Հայաստանն ինչ է: Նրանց համար կարեւորն այն է, որ, օգտագործելով այսօրվա Թուրքիային, հասնեն իրենց կեղտոտ հաշվարկների կատարմանը: Մենք գտնվում ենք այնպիսի մի վիճակի մեջ, երբ մեզ վրա կախված են այդ վտանգները: Ոչ միայն այն, թե Թուրքիան ինչ կանի, այլ նաեւ՝ այն, որ մենք վտանգված ենք եւ պետք է իմանանք, թե ինչ ենք անում: Այն ամենը, ինչ մեզ հետ կատարվում է, պատճառները մեր մեջ են: Դա կարծես վատ բան է, բայց նաեւ լավ բան է, որովհետեւ լուծումները մեր ձեռքին են: Մենք պետք է հստակեցնենք, որ այս իշխանություններն ի զորու չեն, որովհետեւ նրանք եկել են այլ ծրագրերով: Կարող է նրանք չգիտեին էլ մինչեւ վերջ ծրագրերը, բայց երբ արդեն իրենք այդ ճանապարհի վրա են, պարտավորված են անել: Ես ձեզ կասեմ, որ դրա գինը կյանք է: Նրանք չեն վախենում, որ իրենց Հայաստանի ինչ-որ մարդիկ՝ վրիժառուներ, կսպանեն. դրա վախը չունեն: Իրենք գիտեն, որ եթե չկատարեն իրենց տված խոստումները Թուրքիային եւ այդ պղտոր կենտրոններին, ապա իրենց կհասնի Մադուրոյի տարբերակը՝ լավագույն դեպքում, որ ողջ է մնացել, կամ Խամենեիի ճակատագիրը, որովհետեւ չի արել: Իրենց կյանքի հարցն է, եւ դա չի սպառնում Հայաստանից: Մենք պետք է հասկանանք, որ նման դեպքերում փոքր երկրների ուժը կամքն է, ինտելեկտն է, խելքն է: Եվ սուտ է, որ մենք չունենք դաշնակիցներ: Պետությունները դաշնակից են, երբ դու քեզ պահում ես արժանապատիվ:

- Ստացվում է, որ սրանք մնալու են եւ կատարեն իրենց տերերին տված խոստումները: Արդյո՞ք չկա հույս ու ճար, եւ դա արդյո՞ք ժողովրդի ձեռքում է:

- Իրենք պատրաստ են ամեն ինչի: Ես չեմ կանխատեսում, բայց տրամաբանորեն մենք տեսնում ենք, որ այդ վտանգները մեզ վրա կախված են, եւ որեւէ բանի առաջ կանգ չի առնելու այս իշխանությունը: Ինչո՞ւ: Նախ, բարոյականությունը գոնե մեկ օր, մեկ գիշեր չի մնացել այդ մարդկանց մոտ: Այսինքն՝ այսպես կոչված, կարմիր գծեր, բարոյականություն սրանց համար գոյություն չունեն: Բավական է տեսնել այն խրախճանքները, որ իրենք իրականացնում են, ոչ թե նրա համար, որ հաղթել են թշնամուն, այլ՝ որ հաղթել են հայ ժողովրդին: Եվ տոնում են հենց այդ հաղթանակը: Այս առումով իրենք ոչ մի բանի առջեւ կանգ չեն առնելու: Դա նշանակում է, որ ելք չկա՞: Ճիշտ հակառակը: Այդպիսի վիճակներում հենց ժողովրդի միասնական, չեմ ասում՝ բոլորի, այլ այն խելացի, մշակութային, քաղաքական վերնախավի, եթե դեռ ունենք, միայն դրանց միասնական կամքի ուժով կարող ենք ելք գտնել եւ դուրս գալ: Չեմ ասում՝ մի կազմակերպություն լինեն. միասնություն, թեկուզ՝ վիրտուալ որեւէ մեկ դաշտում, որտեղ կարող են նույնիսկ իրար չհանդիպել, եթե չեն ուզում տեսնել միմյանց: Չկա այնպիսի վիճակ, որ անհույս լինի: Երբ չինացի իմաստունին հարցրել են՝ ի՞նչ է անհրաժեշտ հաղթելու համար, պատասխանել է՝ զենք, ռեսուրս եւ կամք: Ասել են՝ իսկ եթե չկա այդ ռեսուրսը: Ասել է՝ զենք եւ կամք: Իսկ եթե զենքն էլ չկա: Ուրեմն՝ կամք:

- Բաքվում դատվում էին Հայաստանը, Արցախի ինքնորոշման իրավունքը, ժողովուրդների ազատությունը: Սա՞ է Փաշինյանի ասած «իրական Հայաստանը»:

- Այդ դատավարությունը գլոբալ նշանակություն ունի: Նրանք դատում են ոչ միայն Արցախի ղեկավարությանը, այլեւ՝ այն ժողովրդին, որն ազգային ազատագրական պայքար է մղում կամ իր ինքնորոշման իրավունքն է պաշտպանում: Արցախը չի ինքնորոշվել Ադրբեջանի կազմում, Արցախը կայացել է Ադրբեջանին բոլորովին չպատկանող տարածքների վրա: Եվ այս ամենը վտանգ է ներկայացնում ադրբեջանցիների համար: Ես չեմ զարմանա, լավ ճանաչելով ադրբեջանական մտածելակերպը, որ Ադրբեջանը մի օր դատի տա Մինսկի համանախագահ երկրներին: Որովհետեւ նրանք ոչ միայն բանակցում էին, այլեւ ֆինանսավորում էին: Եթե հաշվի առնենք, թե ինչի համար են դատվել մեր պատանդները, ապա այս երեք պետությունները նույնպես բարձր մակարդակով սպասարկել են ահաբեկիչ մի միավորի: Իսկ Հայաստանի հասարակությունն իրեն պահում է անտրամաբանական: Մենք չենք օգտագործել հաղթելու, այս իշխանությանը դուրս մղելու մեր շտեմարանը: Չենք օգտվել մեր իրական շտեմարանից եւ անգամ 5 տոկոս գործիքակազմից, որովհետեւ առաջին գործիքակազմը վիրտուալ միասնությունն է՝ իսկական Հայաստանի դեմքը ցույց տալու համար: Չկա: Հարցրեք միջազգային հանրության ամենաարդար մարդուն. ասում է՝ ո՞ւր եք: Ո՞ւր է ձեր իսկական Հայաստանը, ասում եք՝ իրական Հայաստանը հնարածին է, իսկ որտե՞ղ են իսկական Հայաստանի ձայնը, դեմքը:

ԻՐԵՆՑ ԿՀԱՍՆԻ ՄԱԴՈՒՐՈՅԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԿԱՄ ԽԱՄԵՆԵԻԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Ֆելիքս ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

- Ի՞նչն է պատճառը, որ Հայաստանի իշխանությունները որեւէ գործնական քայլ չեն կատարում՝ մեր պատանդներին վերադարձնելու համար:

- Պետությունը, որ պետք է շահագրգիռ լինի՝ վերադարձնելու իր պատանդներին, փոխարենն անում է խիստ հակառակ գործողություններ, նույնիսկ՝ ավելին: Ես այդպես եմ գտնում եւ պնդում եմ, որ պետական մակարդակով հենց Հայաստանն է խոչընդոտ այդ մարդկանց վերադարձին: Այո, մեր քաղաքական պատանդների վերադարձի ամենամեծ խոչընդոտը ՀՀ օրվա վարչակազմն է: Ինչո՞ւ: Որովհետեւ մենք լսել ենք վարչապետին ոչ հարիր հարցադրում, մասնավորապես՝ Ռուբեն Վարդանյանի մասին, թե մենք դեռ պետք է իմանանք՝ Ռուսաստանն ինչու է ուղարկել, ով է նա եւ այլն: Կներեք, դրանք «դանոսչիկի» խոսքեր են, միայն ամենացածր «դանոսչիկին» է սազում նման արտահայտությունը: Այնպես չէ, որ չի հասկանում, թե ինչ է ասում: Այդ խոսքերի տակ հստակ դիրքորոշում կա. այդ մարդկանց՝ Հայաստան վերադարձի մերժումն է: Միջազգային հարաբերություններում շատ լավ հասկանում են, թե ինչ է նշանակում վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձի կողմից նման հայտարարություն անելը: Դա ամենացածր մակարդակի «դանոս» է:

- Մեր գերիներին Բաքվում դատեցին որպես ահաբեկիչների, նացիստներ են անվանում: Ե՞րբ եւ որտե՞ղ էին այդ մարդիկ ահաբեկիչ կամ նացիստ ճանաչվել:

- Նախ, նրանք գերի կամ ռազմագերի չեն, նրանցից ընդամենը 2-ն են ռազմագերի, որոնք մասնակցել են 2020թ. ռազմական գործողություններին, եւ նրանց պահելն արդեն իսկ միջազգային իրավունքի դեմ հանցագործություն է: Դրա մասին կարելի էր հարց բարձրացնել միջազգային քրեական դատարանում, ինչը չի արվել: Մյուսները քաղաքական պատանդ են, որն արգելված է միջազգային իրավունքով: Եվ նրանց պատանդ լինելն ապացուցվեց, երբ 4 հոգու վերադարձրին 2 միջազգային հանցագործի դիմաց, որոնք էլ Թուրքիայի միջոցով վերադարձվեցին Սիրիայում գտնվող ահաբեկչական խմբավորմանը: Այդ պատանդներին, առաջին հերթին Արցախի քաղաքական ղեկավարությանը, դատում են ինչպես միջազգային ահաբեկիչների: Այնինչ 30 տարի ընթանում էին բանակցություններ, իսկ բանակցային գործընթացում ընդգրկված էին ԱՄՆ-ն, Ռուսաստանը եւ Ֆրանսիան: Ցույց տվեք մի փաստաթուղթ, թեկուզ՝ աշխատանքային, որտեղ Արցախի ղեկավարությանն անվանել են նացիստ, ֆաշիստ կամ ահաբեկիչ: Չկա այդպիսի բան:

- Մեր իշխանությունը մասնակից է այդ մարդկանց գերեվարության, պատանդառության հանցանքում:

- Մատը խառն է այս իշխանությունների. առանց ՀՀ վարչակազմի համաձայնության, էլ չեմ ասում՝ խնդրանքի, երբ խոսքը գնում է հատկապես Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության մասին, դա չէր կարող տեղի ունենալ: Խնդիրը, ահա, այդտեղ փնտրեք: Մնացածը, թե ինչ կբացահայտվի, ինչ արդյունք կունենա եւ ինչպիսի արձագանք կգտնի հասարակության մեջ, դեռ կտեսնենք: Բայց այս հասարակությունն այնքան ծեծված եւ նսեմացված է, որ կարող է ամեն ինչ էլ պարզվի, եւ որեւէ ակտիվ գործողություն տեղի չունենա: Եվ դրանից չէ, որ այս վարչակարգը վախենում է: Այս վարչակարգը վախենում է միայն ու միայն դրսի իր ղեկավարներից: Բացարձակապես նա չունի այն խնդիրը, թե ինչ կմտածի ժողովուրդն այստեղ: Այս ժողովրդին խաբելով են նրանք հասել իշխանության, եւ դա բոլորը գիտեն, արդեն բացահայտ է:

- Սամվել Բաբայանին բաց են թողնում, իսկ Վագիֆ Խաչատրյանին ձերբակալում են, որովհետեւ Սամվել Բաբայանի վարորդն է եղել: Ինչպե՞ս հասկանանք:

- Սամվել Բաբայանին ճանաչում եմ վաղուց եւ ասեմ, որ սիրտս ուղղակի մղկտում է: Երբ ինքը ծանր, գեներալին ոչ հարիր խոսքեր է ասել նույն մեր այդ պատանդների հասցեին, ամենից շատ ես եմ ցավացել, սրտիցս արյուն էր կաթում: Ես չէի ուզենա, որ Արցախի հերոսներից մեկն այդպես արտահայտվեր: Այդպես հենց ինքն է ամենամեծ ստվերը գցում իր հերոսական անցյալի վրա: Եվ այնպես չէ, որ ես դրա համար ուրախանում եմ:

- Սրանց իշխանությունը 8 տարի տեսնելուց հետո ի՞նչ եզրահանգման գանք. ովքե՞ր են սրանք, եւ ո՞րն է սրանց վերջնական նպատակը:

- Ես համոզված եմ եւ մինչեւ անգամ կարող եմ ապացուցել բաց տեղեկատվությունից, որ այս իշխանությունները բերված են ամենապղտոր գլոբալիստական կենտրոնների կողմից: Այո, պայքարը եղել է՝ ճանաչե՞լ Արցախը որպես անկախ, թե՞, այսպես ասած, մեծ, գլոբալիստական կենտրոնների հաշվարկներով ոչ միայն Արցախը, այլեւ Հայաստանը դարձնել տարածք: Տարածք, այլ ոչ թե որեւէ սուբյեկտ: Հնարավոր է, որ ինչ-որ խորհրդանիշներ մնան՝ դրոշը եւ այլն: Բացարձակապես խնդիր չկա, որ տարածքը ձեւական անունով մնա: Եվ այն, ինչ որ անում է օրվա վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը, դրա մասին է խոսում: Փաստորեն, անում են ամեն ինչ, որ ձեւական ինչ-որ անուն մնա, եւ այս հանրապետությունն ամբողջովին դառնա տարածք Թուրքիայի ու իր միջոցով առայժմ գործող ամենապղտոր ուժերի համար, լինի դա հավաքական Արեւմուտքը, թե լինի Ամերիկան: Խնդիրն այն է, որ Իրանի դեմ գործողություններն արդեն ցույց են տալիս, որ Արեւմուտքը համապատասխան կերպով չի գնահատում Իրանին՝ որպես հին քաղաքակրթություն: Հակառակը, իրենք աշխատում են հին քաղաքակրթություններն ուղղակի ջնջել: Բայց տեսնում ենք, որ իրենց հաշվարկները տապալվում են առաջին իսկ օրերից: Մենք պետք է հասկանանք, թե նրանց համար Հայաստանն ինչ է: Նրանց համար կարեւորն այն է, որ, օգտագործելով այսօրվա Թուրքիային, հասնեն իրենց կեղտոտ հաշվարկների կատարմանը: Մենք գտնվում ենք այնպիսի մի վիճակի մեջ, երբ մեզ վրա կախված են այդ վտանգները: Ոչ միայն այն, թե Թուրքիան ինչ կանի, այլ նաեւ՝ այն, որ մենք վտանգված ենք եւ պետք է իմանանք, թե ինչ ենք անում: Այն ամենը, ինչ մեզ հետ կատարվում է, պատճառները մեր մեջ են: Դա կարծես վատ բան է, բայց նաեւ լավ բան է, որովհետեւ լուծումները մեր ձեռքին են: Մենք պետք է հստակեցնենք, որ այս իշխանություններն ի զորու չեն, որովհետեւ նրանք եկել են այլ ծրագրերով: Կարող է նրանք չգիտեին էլ մինչեւ վերջ ծրագրերը, բայց երբ արդեն իրենք այդ ճանապարհի վրա են, պարտավորված են անել: Ես ձեզ կասեմ, որ դրա գինը կյանք է: Նրանք չեն վախենում, որ իրենց Հայաստանի ինչ-որ մարդիկ՝ վրիժառուներ, կսպանեն. դրա վախը չունեն: Իրենք գիտեն, որ եթե չկատարեն իրենց տված խոստումները Թուրքիային եւ այդ պղտոր կենտրոններին, ապա իրենց կհասնի Մադուրոյի տարբերակը՝ լավագույն դեպքում, որ ողջ է մնացել, կամ Խամենեիի ճակատագիրը, որովհետեւ չի արել: Իրենց կյանքի հարցն է, եւ դա չի սպառնում Հայաստանից: Մենք պետք է հասկանանք, որ նման դեպքերում փոքր երկրների ուժը կամքն է, ինտելեկտն է, խելքն է: Եվ սուտ է, որ մենք չունենք դաշնակիցներ: Պետությունները դաշնակից են, երբ դու քեզ պահում ես արժանապատիվ:

- Ստացվում է, որ սրանք մնալու են եւ կատարեն իրենց տերերին տված խոստումները: Արդյո՞ք չկա հույս ու ճար, եւ դա արդյո՞ք ժողովրդի ձեռքում է:

- Իրենք պատրաստ են ամեն ինչի: Ես չեմ կանխատեսում, բայց տրամաբանորեն մենք տեսնում ենք, որ այդ վտանգները մեզ վրա կախված են, եւ որեւէ բանի առաջ կանգ չի առնելու այս իշխանությունը: Ինչո՞ւ: Նախ, բարոյականությունը գոնե մեկ օր, մեկ գիշեր չի մնացել այդ մարդկանց մոտ: Այսինքն՝ այսպես կոչված, կարմիր գծեր, բարոյականություն սրանց համար գոյություն չունեն: Բավական ազգային ազատագրական պայքար է մղում կամ իր ինքնորոշման իրավունքն է պաշտպանում: Արցախը չի ինքնորոշվել Ադրբեջանի կազմում, Արցախը կայացել է Ադրբեջանին բոլորովին չպատկանող տարածքների վրա: Եվ այս ամենը վտանգ է ներկայացնում ադրբեջանցիների համար: Ես չեմ զարմանա, լավ ճանաչելով ադրբեջանական մտածելակերպը, որ Ադրբեջանը մի օր դատի տա Մինսկի համանախագահ երկրներին: Որովհետեւ նրանք ոչ միայն բանակցում էին, այլեւ ֆինանսավորում էին: Եթե հաշվի առնենք, թե ինչի համար են դատվել մեր պատանդները, ապա այս երեք պետությունները նույնպես բարձր մակարդակով սպասարկել են ահաբեկիչ մի միավորի: Իսկ Հայաստանի հասարակությունն իրեն պահում է անտրամաբանական: Մենք չենք օգտագործել հաղթելու, այս իշխանությանը դուրս մղելու մեր շտեմարանը: Չենք օգտվել մեր իրական շտեմարանից եւ անգամ 5 տոկոս գործիքակազմից, որովհետեւ առաջին գործիքակազմը վիրտուալ միասնությունն է՝ իսկական Հայաստանի դեմքը ցույց տալու համար: Չկա: Հարցրեք միջազգային հանրության ամենաարդար մարդուն. ասում է՝ ո՞ւր եք: Ո՞ւր է ձեր իսկական Հայաստանը, ասում եք՝ իրական Հայաստանը հնարածին է, իսկ որտե՞ղ են իսկական Հայաստանի ձայնը, դեմքը:

ԻՐԱՆՆ ԻՐ ՁԵՌՔՆ Է ՎԵՐՑՐԵԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հորմուզի նեղուցը փակելու որոշում կայացնելով՝ մերձավորարեւելյան ներկայիս էսկալացիայում Իրանն իր ձեռքն է վերցրել նախաձեռնությունը՝ գրում է The Guardian պարբերականը: Հորմուզի նեղուցը փակելը կարող է բերել նրան, որ ներկայիս իրանական հակամարտությունում ԱՄՆ ու Իսրայելը կկորցնեն նախաձեռնողականությունը: Եվ դա կցնցի համաշխարհային տնտեսությունը: Լոնդոնի Արքայական քոլեջի անվտանգային հարցերի հետազոտող պրոֆեսոր Պիտեր Նոյմանը նշում է, որ Վաշինգտոնն արդեն քանի օր է՝ փորձում է հնարավորինս «լավ պատասխան» գտնել Թեհրանի կողմից Հորմուզի նեղուցի փակմանը: Դա, ըստ նրա, ամերիկյան վարչակազմի համար անակնկալ էր: Եվ հիմա, ըստ էության, սպառնալիքի տակ են հայտնվել Իսրայելի եւ ԱՄՆ-ի բոլոր պլանները: Թրամփն արդեն հանդես է եկել կոչով՝ հորդորելով բոլոր երկրներին, որոնք կախված են այդ նեղուցով տեղափոխվող նավթից, քայլեր ձեռնարկել՝ նեղուցի վերաբացման եւ անվտանգ նավագնացության վերականգնման ուղղությամբ: Նաեւ սպառնացել է, որ եթե ՆԱՏՕ-ն այդ հարցում ամերիկացիներին չօգնի կամ գործուն քայլեր չձեռնարկի, ապա դաշինքին շատ վատ ապագա է սպասվում: Ռազմական փորձագետ Էրլ Ռասմուսենն էլ նշել է, որ Թրամփի անհանգստությունը հասկանալի է, քանի որ նեղուցը մի քանի ամիս կարող է փակ մնալ եւ վերահսկվել իրանական կողմից: Դա կանխելու համար հնարավոր է, ԱՄՆ-ը կտրուկ քայլերի գնա:

«Սեւ ծովի ալիքները». Ֆիլմ, որն արժե դիտել

«Սեւ ծովի ալիքները» խորհրդային կինոնկարը նկարահանվել է 1975-76 թթ., այն խորհրդային մանկական եւ պատմաարկածային գրականության ամենից կարեւոր գործերից մեկի էկրանավորումն է: Կինոնկարի ռեժիսորներն են Արթուր Վոյտեցկին, Օլեգ Գոյդոյը, Վյաչեսավ Քրիշտոֆովիչը: Նկարահանվել է Դովժենկոյի անվան կինոստուդիայում՝ ԽՍՀՄ Կենտրոնական հեռուստատեսության պատվերով: Ֆիլմի պրեմիերան կայացել է 1976 թվականին: Բազմասերիանոց ֆիլմի հիմքում Վալենտին Կատաեւի «Սեւ ծովի ալիքները» քառահատոր վեպի առաջին երեք հատորներն են ընկած: Սա մանկապատանեկան եւ հեղափոխական ժամանակները ներկայացնող հետաքրքիր վիպաշար է, որտեղ դեպքերը կատարվում են 20-րդ դարի սկզբին՝ Օդեսայում, իսկ իրականությունը ներկայացվում է դեռահասների ընկալման պրիզմայով: Ինչպես սովորաբար հատուկ է խորհրդային կինոյին, այստեղ եւս միախառնված է մի քանի ժանրային տարր՝ պատմական քրոնիկա, արկածային կինո, դաստիարակչական դրամա: Եվ այս միախառնմամբ՝ փորձ է արվում ներկայացնել երիտասարդ հերոսների անհատականության ձեւավորման պրոցեսը՝ պատմական շրջադարձային ժամանակահատվածում: Բացի պատմական կոնտեքստում անձի ձեւավորման նկարագրից, կինոնկարում նաեւ այլ թեմաներ են արծարծվում՝ ընկերություն եւ սոցիալական հավասարություն, պատմական հիշողություն, պատանեկան արկածասիրություն:

Այն հիանալի ընտանեկան կինոնկար է, որն արժանի է դիտման: Իսկ պատմական ժամանակի եւ միջավայրի վերակերտմանը հատկացված մեծ ուշադրությունն օգնում է, որպեսզի ընդհանուր պատմական կոնտեքստում ավելի լավ ընկալվի կինոնկարը՝ անկախ գաղափարական ուղղվածությունից: Ֆիլմում հանդես է եկել հայտնի դերասանների մի բույլ՝ Օլեգ Տաբակովը, Ադա Ռոգովցեւան, Ալեքսեյ Պետրենկոն, Բոգդան Ստուպկան եւ այլք:

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՅԳԻ, ԺԱՆԳՈՏԱԾ ՌԵԼՍԵՐ, ՄՈԼԱԽՈՏԻ ՄԵՋ ԿՈՐԱԾ ՏԱՐԱԾՔ

ՀԱՍԱՐԱԿ

Ի քանի շաբաթ առաջ «Հրապարակ» օրաթերթը հարցում էր ուղարկել Լոռու մարզի մի շարք համայնքների ղեկավարներին՝ պարզելու, թե ինչ աշխատանքներ են կատարվում համայնքային զբոսայգիներում՝ ոչ միայն մաքրության ու բարեկարգման, այլեւ քաղաքացիների հանգիստն ու ժամանցը կազմակերպելու ուղղությամբ: Մենք արդեն անդրադարձել ենք, որ Ստեփանավան, Սպիտակ, Ալավերդի համայնքներից ստացել ենք հիմնականում ձեւական պատասխաններ, որտեղ խոսվում է միայն մաքրման ու ծառատունկի մասին:

Ստացանք նաեւ Վանաձորի համայնքապետարանի պատասխանը: Ըստ այդմ՝ համայնքում զբոսայգիների եւ պուրակների սպասարկումն իրականացնում է համայնքապետարանի ենթակայությամբ գործող «Նեցուկ ՀՁ» ՀՈԱԿ-ը: Նշվում է, որ ամենօրյա սանիտարական մաքրման աշխատանքներ են կատարվում Հայքի հրապարակում, Քիմիագործների այգում, Սայաթ-Նովայի անվան եւ մի շարք այլ պուրակներում: Տարվա ընթացքում իրականացվում են շաբաթօրյակներ, էտվում են ծառերը, տարբեր ծրագրերով բարեկարգվում են որոշ տարածքներ: Ամռան եւ աշնան ամիսներին այգիներում կազմակերպվում են ցուցահանդեսներ, որոնք ուղեկցվում են երաժշտական կատարումներով, երիտասարդ DJ-ների նախաձեռնությամբ բացօթյա համերգներ են կազմակերպվում, նաեւ՝ բացօթյա կինոդիտումներ, լուսանկարչական ցուցահանդեսներ: Սակայն չեն նշվում կոնկրետ ծրագրեր, դրանց անցկացման ժամանակացույցը, պատասխանատուները, մեխանիզմները, որոնց միջոցով քաղաքացիները կարող են ոչ միայն հանդիսատես լինել, այլ նաեւ մասնակցել այդ նախաձեռնություններին: Մինչդեռ քաղաքային այգին պետք է լինի քաղաքի մշակութային եւ հասարակական կյանքի կենդանի կենտրոններից մեկը: Մարդիկ պետք է ոչ միայն նստեն նստարաններին կամ քայլեն ծառուղիներով, այլեւ մասնակցեն տարբեր նախաձեռնությունների՝ գրական երեկոների, ասմունքի մրցույթների, մանկական ներկայացումների, բացօթյա համերգների, ֆիլմերի ցուցադրությունների կամ ստեղծագործական հանդիպումների:

Օրերս շրջեցի մի քանի զբոսայգիներում: Ցավոք, տեսածս մխիթարական չէ: Քիմիագործների այգին, ինչպես նաեւ նախկին Երկաթուղայինների՝ այժմ Հրանտ Մաթեւոսյանի անվան զբոսայգին ակնհայտորեն ունեն մաքրության եւ բարեկարգման խնդիրներ: Այստեղ դեռ մեծ աշխատանք կա կատարելու՝ թե՛ տարածքների մաքրման, թե՛ ընդհանուր տեսքի բարելավման ուղղությամբ: Ավելի վատ պատկեր է քաղաքի գլխավոր՝ Սայաթ-Նովայի անվան մանկական այգում, որը դեռ անցյալ տարի հիմնանորոգվել է եւ հանդիսավորությամբ բացվել: Այգու հեռավոր ծայրին, Աբովյան փողոցի հարեւանությամբ մի հսկայական փոս է բացվել: Ենթադրություններ կան, թե տարածքը տրամադրել են որեւէ շինարարության համար: Եթե այդպես է, ստացվում է, որ այգու առանց այդ էլ փոքրացած ու փոքրացող տարածքում կարող է հայտնվել եւս մեկ շինություն՝ լրացնելով արդեն գոյություն ունեցող տարբեր ոճերի ու գույների, այգու հետ անհամատեղելի կառույցների շարքը: Նույն հատվածում կարելի է տեսնել ավերակ մանկական կառուսելներ՝ ժանգոտած մետաղական կառուցվածքներով եւ կոտրված թեւերով: Մոտակայքում դեռ պահպանվել են մանկական գնացքի ժանգոտած գծերը, վագոններն ու էլեկտրաքարշը: Այս ամենը՝ մոլախոտի մեջ խեղդված, որն ավելի շուտ հիշեցնում է լքված տարածք, քան վերջերս վերանորոգված մանկական այգի: Նման վայրերը հաճախ դառնում են թափառող շների ապաստարան: Այգում կա նաեւ գեղեցիկ լճակ, սակայն անցած ամառ, նույնիսկ շոգ օրերին, այն ջրով չլցվեց: Ուստի հարց է ծագում. արդյո՞ք բավարար է միայն մաքրել այգիները եւ երբեմն կազմակերպել մեկ-երկու միջոցառում:

Հիշեցնենք, որ ոչ այնքան հեռավոր անցյալում մեր քաղաքների զբոսայգիները շատ ավելի աշխույժ էին: Այստեղ կազմակերպվում էին գրական եւ երաժշտական, պարի երեկոներ, ասմունքի մրցույթներ, մանկական ներկայացումներ, ցուցահանդեսներ, բացօթյա կինոդիտումներ: Մարդիկ ոչ միայն դիտում էին այդ միջոցառումները, այլ նաեւ մասնակցում էին դրանց: Ձեւավորվում էր համայնքային մշակութային կյանքը: Ինչո՞ւ չվերականգնել ավանդույթներն ու չվերադառնալ նախկին փորձին: Քաղաքային այգիները չպետք է պարզապես ծառերի եւ նստարանների հավաքածու լինեն: Դրանք քաղաքի մշակութային եւ հասարակական կյանքի կարեւոր հայելին են:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆՆ ՈՒ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՕՍՏՐՈՎՍԿԻՆ

Գրականագիտական շրջանակներում հաճախ են հայ իրապաշտպան դրամատուրգիայի հիմնադիր Գաբրիել Սունդուկյանին համեմատում ռուս դասական հեղինակ Ալեքսանդր Օստրովսկու հետ, որը ռուսական ազգային թատրոնի հիմնադիրն է: Սունդուկյանն ու Օստրովսկին, ի դեպ, ծանոթներ են եղել, երբ Օստրովսկին Թիֆիլսում է եղել՝ 1883 թվականին: Այն ժամանակվա Կովկասի փոխարքայության «մայրաքաղաքում» Օստրովսկին ապրել է 1883 թվականի հոկտեմբերին: Սունդուկյանն այդ ժամանակ էլ այցելել է ռուս հեղինակին, նրան փոխանցել իր ստեղծագործություններից եւ այդ առթիվ արել հետեւյալ գրառումը, որը հետագայում՝ 1911 թվականին, տպագրվել է «Ռուսսկայա ստարինա» թերթում. «Ալեքսանդր Նիկոլաեւիչը, իմանալով, որ ունեմ իմ «Պեպո» պիեսի ռուսերեն ձեռագիր թարգմանությունը, այն վերցրեց ինձնից Մոսկվա մեկնելուց առաջ եւ խոստացավ նայել, ուղղումներ անել, եթե անհրաժեշտություն լինի՝ լեզվի առումով, եւ բեմադրել այնտեղ: Սակայն Ալեքսանդր Նիկոլաեւիչի ցանկությունն ի կատար չի ածվում՝ նրա հիվանդության եւ անժամանակ մահվան պատճառով, որը տխրության առիթ դարձավ ողջ Ռուսաստանի մտավորականության համար: Ալեքսանդր Նիկոլաեւիչի բարի վերաբերմունքն իմ հանդեպ ես երբեք չեմ մոռանա»: Իսկ որպես նվեր փոխանցված ստեղծագործությունների գիրքն էլ մակագրել է. «Ալեքսանդր Նիկոլաեւիչ Օստրովսկուն՝ ի նշան խորին հարգանքի՝ հեղինակից. 28 հոկտեմբերի, 1883 թվական. Թիֆլիս»:

Սունդուկյանը շատ ակտիվ մասնակցություն է ունեցել Թիֆլիսում Օստրովսկու պատվին կազմակերպված բոլոր հանդիսավոր միջոցառումներին: Նա արդեն առաջացած տարիքում էր՝ 83 տարեկան, երբ նրան հրավիրում են Մոսկվա՝ Նիկոլայ Գոգոլի արձանի բացմանը: Նա խորապես ափսոսում է, որ չի կարողացել մասնակցել այդ միջոցառմանը, քանի որ խորին հարգանք ուներ «Ռեւիզորի» հեղինակի հանդեպ: «Մտովի տեղափոխվում եմ այն հեռու ժամանակները, երբ, որպես ուսանող, ապրում էի Պետերբուրգում եւ տեսնում Շչեպկինին՝ քաղաքապետի դերում: Այդ ժամանակներից ամրացավ իմ սերը թատրոնի հանդեպ, որին ես նվիրեցի կյանքիս լավագույն տարիները, որին տվեցի իմ լավագույն ստեղծագործությունները, մտքերն ու ապրումները, հոգու մի մասնիկը: Գոգոլի հետ են կապված իմ լավագույն հիշողությունները, եւ նրան եմ պարտական նաեւ թատրոնի հանդեպ իմ ունեցած սիրո ձեւավորման համար...»,- գրել է Սունդուկյանը: Ռուսական ազգային թատրոնի մեկ այլ նշանավոր դեմք՝ Միխայիլ Շչեպկինն էլ Սունդուկյանի համար հարազատ մարդ էր: Նույն՝ 1911-ին նա «Ռուսսկայա ստարինայում» գրում է. «Ինչ վերաբերում է հայտնի Շչեպկինին, ապա կարող եմ ասել, որ նրան տեսել եմ մի քանի անգամ՝ Ալեքսանդրինյան թատրոնի բեմում, երբ գալիս էր Մոսկվայից: Չնայած անցել է արդեն վեց տասնամյակ, սակայն տպավորությունները, որոնք ունեմ նրա տաղանդավոր խաղից, երբեք չեն ջնջվել հիշողությունիցս: Հատկապես հիշում եմ, թե որքան բոցավառ էր «Ռեւիզորում» նա ներկայացնում քաղաքագլխի ամփոփիչ մենախոսությունը»: Սունդուկյանը Շչեպկինին անդրադառնում է նաեւ պետերբուրգյան թատերական կյանքը ներկայացնելիս. «Ես սիրեցի թատրոնն ու այդ ժամանակներից բաց չեմ թողել եւ ոչ մի՝ քիչ թե շատ հայտնի պիեսի բեմադրություն, որն իրականացվել է Ալեքսանդրինյան թատրոնում, որտեղ ապշած եմ մնացել Մարտինովի, Կարատիգինի, Շչեպկինի եւ շատ այլոց բեմական խաղով»: 1898 թվականին Յուրի Վեսելովսկուն գրած նամակում Սունդուկյանը եւս անդրադառնում է Շչեպկինին: Առհասարակ, իր հայացքներով, ավանդույթներով եւ հոգով՝ Սունդուկյանը կապված էր Մոսկվայի Փոքր թատրոնի հետ, որը նաեւ անվանում են «Օստրովսկու տուն»: Ու նրան այնտեղ մեծապես հարգում էին՝ ի դեմս Ալեքսանդր Սումբատով-Յուժինի, Ալեքսանդր Յաբլոչկինի: Ավելին, Սունդուկյանի դուստրը հետագայում դառնում է այդ թատրոնի դերասանուհի: Խոսքն Ալեքսանդր Լենսկու աշակերտուհու՝ Փոքր թատրոնի դերասանուհի Թինաթինա Արմենինա-Սունդուկյանի (1887-1970) մասին է:

Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ԻՆՉՔԱՆ ՇԱՏ ԵՆ ԱՐԳԵԼՈՒՄ ԽՈՍԵԼ ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ, ԱՅՆՔԱՆ ԸՄԲՈՍՏՈՒԹՅՈՒՆ Է ԱՐԹՆԱՆՈՒՄ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Փետրվարի 25-ին Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի բեմում կայացավ «Բլոկադա» ներկայացման առաջնախաղը, որի հիմքում արցախյան բլոկադան է: Արցախցի մի ընտանիքի հյուր է գալիս երեւանցի մի ընտանիք, եւ սկսվում է բլոկադան: Այս երկու՝ առաջին հայացքից միմյանցից տարբեր ընտանիքները պետք է, ամբողջ աշխարհից կտրված, գոյատեւեն մեկ տան մեջ, եւ ոչ ոք չգիտի, թե ինչով կավարտվի ամեն ինչ: Ներկայացման բեմադրող ռեժիսորը Սեդրակ Գոջամանյանն է, պիեսի հեղինակը՝ Անի Մաղաքյանը: ««Բլոկադայի» սկզբնական գաղափարն առաջացել է պրոդյուսեր Արմեն Պետրոսյանի մոտ, մի գեղեցիկ օր ես եւ Արմենը մտքերի փոխանակման արդյունքում հասանք այն եզրակացությանը, որ արժե Արցախի բլոկադայի թեմայով ներկայացում անել: Քննարկեցինք, թե ում հետ կյանքի կոչենք գաղափարը, թե ով կարող է լավ սցենար գրել, ովքեր լավագույնս կմարմնավորեն հերոսներին… Արմենը հրավիրեց նաեւ մեր սիրելի Սոֆյա Ղուլյանին՝ որպես համապրոդյուսեր, ու սկսվեց ամեն ինչ»,- պատմեց ռեժիսոր Սեդրակ Գոջամանյանը: Սցենարիստ Անի Մաղաքյանը, որը հայտնի է հեռուստատեսային մի շարք նախագծերից, առաջին անգամ է պիես գրել եւ խոստովանում է, որ շատ բարդ ու պատասխանատու մոտեցում է ցուցաբերել թեմային: Զրուցել ենք ներկայացման գլխավոր հերոսներից մեկին մարմնավորած դերասանուհի **Մարջան Ավետիսյանի** հետ:

- Քանի որ այսօր իշխանություններն արգելում են անգամ «Արցախ» բառն արտասանել, Արցախի մասին ներկայացում բեմադրելը մեծ ճոխություն է, կպատմեք պիեսի մասին:

- Նախ ասեմ, որ լավ է, որ իշխանությունն արդեն չի էլ թաքցնում իրականությունը եւ չի խոստանում, որ դե մի օր ամեն ինչ լավ կլինի.... ուղիղ ասում են՝ Արցախի մասին չենք խոսելու, իսկ նրանք, ովքեր կխոսեն, Ցեղասպանության թանգարանի տնօրենի ճակատագրին կարժանանան: Ինչ վերաբերում է ներկայացմանը, ապա այն գրեթե քաղաքական թեմաներ չի շոշափում, առանձնապես քաղաքական բնույթի ներկայացում անելու միտում չի եղել: Ռեժիսորի, պրոդյուսերի ցանկությունը շատ մեծ էր, որ ուղղակի այն մարդիկ, ովքեր զրկվել են իրենց տնից-տեղից, հայրենիքից, ամեն ինչից, պիեսը լինի հենց նրանց ապրումների մասին: Շատ ուրախ եմ, որ ներկայացումը կա, չգիտեմ, թե դեռ որքան կլինի հայ թատրոնի բեմում, սակայն գաղափարը շատ լավն է: Ներկայացումը, բնականաբար, կոմերցիոն է, պետական որեւէ հովանավորություն չկա, արձագանքները շատ լավն են: Ես շատ եմ ուզում, որ այն դիտեն ոչ միայն Արցախի հայերը, այլեւ՝ Հայաստանի Հանրապետության հայերը, թեպետ դիտում են, եւ ես նրանցից շատ եմ լսել, որ գոհ են պիեսից, ուրախ են, որ նման ներկայացումներ են բեմադրվում: Մարդիկ ասում են՝ լավ է, որ գոնե Արցախ անունը չենք մոռանում եւ չենք մոռանում, որ այս մարդիկ ունեն հոգատարության կարիք: Արցախցիները շատ դժվարությամբ, բայց մեծագույն ցանկությամբ են գալիս ներկայացումը դիտելու: Ներկայացումը ստեղծելու նպատակն այդ մարդկանց ճակատագրին անդրադառնալն է, որպեսզի նրանք անտարբերության չարժանանան....

- Իսկ վտանգ չե՞ք տեսնում, որ մի օր էլ թատրոններին կարգելեն՝ Արցախի մասին ներկայացումներ բեմադրել:

- Ցեղասպանության թանգարանի տնօրենն ուղղակի գիրք նվիրելով ունե՞ր մտավախություն, որ իրեն կարող են աշխատանքից հեռացնել, անշուշտ՝ ոչ, ուստի որեւիցե մեկս չգիտենք, թե վաղն ում մտքին ինչ կարող է փչել, եւ ինչ կարող է անել: Շատ անկանխատեսելի ժամանակներում ենք ապրում, գուցե Արցախի անունն էլ չտանք, բայց մեզ լռեցնելու մի առիթ գտնեն: Չեմ կասկածում, որ կարող են եւ վնասել մեզ, եւ լռեցնելու փորձեր կատարել:

- Բայց մենք անկախ երկրում ենք ապրում, որտեղ ասում են՝ ժողովրդավարություն է, գոնե արվեստը չպե՞տք է ազատ լինի՝ թատրոնն ու գրականությունը ներառյալ:

- Մենք նախքան 2018-ը դեմոկրատիայից գրեթե չէինք խոսում, այդ մասին խոսեց նոր իշխանությունը, որը երիտասարդներից էր կազմված եւ դեմոկրատիայի հարցում ամենաշահագրգիռը պետք է լիներ: Բայց մենք տեսնում ենք, որ այս մարդկանց արարքները չեն համապատասխանում իրական դեմոկրատիային: Բացի այդ, մենք տեսնում ենք, որ այն ամբողջ աշխարհում է փուչ երեւույթ, այնպես չէ, որ միայն Հայաստանում է այդպես: Դեմոկրատիայի անվան տակ ասվում է մի բան, արվում է լրիվ այլ բան: Մենք էլ, որպես պետություն, անմասն չենք մնում այդ ամենից: Անունը դրել են դեմոկրատիա, բայց մենք տեսնում ենք, որ ինչ ուզում՝ անում են:

- Իշխանությունները փորձում են իմիտացիա ստեղծել, որ հասարակության մեծ մասին Արցախի հարցը չի հետաքրքրում, ավելին՝ հանրությունը չի սիրում Արցախն ու արցախցուն: «Բլոկադա» ներկայացումն ովքե՞ր են գալիս դիտելու, արդյո՞ք հայ մարդուն իսկապես չի հետաքրքրում Արցախը:

- Անգամ այն մարդիկ, ովքեր երբեմն իրենց լայն շրջապատում ձեւացնում են, թե Արցախով հետաքրքրված չեն, իրականում՝ նրանց հոգու խորքում այլ բան է կատարվում: Անգամ ամենաանտարբեր մարդը հասկանում է, որ ինչ-որ բան այնպես չէ, եւ իշխանական հեռուստաալիքները չեն արտացոլում իրականությունը: Որքան շատ են արգելում մարդկանց խոսել Արցախի մասին, մարդկանց ներսում ըմբոստությունն ավելի շատ է արթնանում: Մարդիկ պարզ հարց են տալիս՝ ինչո՞ւ չի կարելի խոսել մի պետության մասին, որը գրեթե 30 տարի եղել է հայկական, էլ չենք խոսում անցյալի մասին, որտեղ հազարավոր տարիներ Արցախը եղել է հայերինը: Մարդկանց անհնար է լռեցնել, մեր հիշողությունից մեր պատմությունը հնարավոր չէ հանել: Մարդիկ շատ են գալիս «Բլոկադա» ներկայացումը դիտելու, հետաքրքրությունը մեծ է: Արցախը, բլոկադայի թեման մարդկանց համար անչափ կարեւոր են: Ես այդ ներկայացումը եւ այն կերպարը, որը խաղում եմ, շատ եմ սիրում: Այն դաժան ճակատագրով մարդկանց մասին է, ովքեր չեն կորցնում ապրելու ցանկությունը, երազելու ունակությունը: Այն մարդկանց մասին է, ովքեր փուլ չեն գալիս արհավիրքից հետո եւ հիշում են իրենց տունը՝ անկախ ամեն ինչից:

- «Վերջին սպարապետը» ֆիլմում էլ գլխավոր դերակատարներից մեկը Դուք եք: Ի՞նչ եք կարծում՝ այսօր հայրենասիրական ֆիլմերն ի՞նչ դեր ունեն մեր իրականության մեջ:

- Դրանք եւս մեկ անգամ հիշեցնում են մարդկանց, որ մենք կանք ու լինելու ենք: Նոր սերնդի համար Վազգեն Սարգսյանին խորությամբ ճանաչելը շատ կարեւոր է: Հատկապես նոր սերունդը պետք է իմանա, թե ով ենք եղել մենք՝ 30 տարի շարունակ, եւ ինչի ենք վերածվել այսօր:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 17.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԵԹԵ 2020-ԻՆ ՊԱՐՏՎԵԼ ԵՆՔ, ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ, ԹԵ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՍԽԱԼ Է ԵՂԵԼ

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Երբ լսում ենք քաղաքական հայտ ներկայացնող առանձին ուժերի եւ նրանց ներկայացուցիչների փաստարկները, հասկանում ենք, որ նրանց խոսքը Հայաստանի ու հայ մարդու մասին է, իսկ երբ լսում ենք Հայաստանի օրվա իշխանությունների ու նրանց սատարող շրջանակների խոսույթն ու խոսույթի թեման, միանգամից հասկանում ենք, որ սրանց ասածն ու ուզածը ոչ թե Հայաստանին ու հայ մարդուն են վերաբերում, այլ՝ նրանց խաբելուն:

Այս իմաստով, հատկապես հատկանշական է արցախյան քաղաքականության հետ կապված՝ օրվա իշխանությունների դիրքորոշումը: Դիրքորոշում, որը ոչ թե իրավիճակի հավասարակշռված գնահատում է, այլ այս «չպատերազմը» Հայաստանի վրա վաճառելու մի հիվանդագին մղում:

Իհարկե, Արցախյան առաջին պատերազմի ու դրանից հետո ընկած ժամանակների համար, Հայաստանի ընտրված ճանապարհն ամենաճիշտ ճանապարհը չես համարի: Չես համարի, որովհետեւ այն պատերազմը սխալ տեղում կանգնեցնող ճանապարհ էր, որովհետեւ այն պատերազմի աշխարհաքաղաքական նշանակությունը Լաչինի միջանցքի լայնության հետ շփոթող ճանապարհ էր: Սակայն, որքան որ սխալ էր պատերազմը սխալ տեղում կանգնեցնող ու պատերազմի աշխարհաքաղաքական նշանակությունը Լաչինի միջանցքի հետ շփոթող քաղաքականությունը, նույնքան էլ սխալ է Ադրբեջանի պահանջով արցախյան հիմնախնդիրը Հայաստանի ռազմաքաղաքական օրակարգից դուրս դնելու համար Արցախյան առաջին պատերազմից հրաժարվելու քաղաքականությունը:

Այս երկրի խնդիրը, այս առումով, միայն այն չէ, որ երկիրը պատերազմում պարտվել է: Այս երկրի խնդիրը նաեւ այն է, որ ինչպես իր ընտրած նախորդ իշխանությունները չէին հասկանում, որ Արցախի հարցը լուծողը ոչ թե միջազգային հանրությունն է, այլ հզոր Հայաստանը, այնպես էլ իր ընտրած այսօրվա իշխանությունը չի հասկանում, որ Արցախն այսօրվա Հայաստանի ռազմաքաղաքական օրակարգի մաս չդարձնելու համար ամենեւին էլ պարտադիր չէ, որ մենք Արցախյան առաջին պատերազմում տարած մեր հաղթանակից հրաժարվենք: Այն, որ մենք այս պատերազմում պարտվել ենք, դա դեռ չի նշանակում, թե պարտվել ենք, որովհետեւ սխալ է եղել առաջին պատերազմը: Ճիշտ հակառակը՝ դա նշանակում է, որ պարտվել ենք, որովհետեւ առաջին պատերազմում հաղթելուց հետո սխալ ենք գնահատել մեր հաղթանակը, սխալ ենք վարվել մեր հաղթանակի հետ:

Այս առումով, մեր երկրի խնդիրն այսօր ոչ թե արցախյան օրակարգն այսօրվա Հայաստանի ռազմաքաղաքական առաջնահերթությունից դուրս դնելն է, արցախյան առաջին պատերազմը սխալ պատերազմ համարելը, այլ հաղթելուց հետո մեր թույլ տված սխալներն ու բացթողումները գիտակցելն ու դրանք երբեք թույլ չտալը:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am